Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՁԵՌՆԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

2018թ. կատարվել են մարզպետարանի առջև դրված խնդիրների լուծման, գործավարության վարման, փաստաթղթերի ընդունման, օպերատիվ հաշվառման և տնօրինման միասնական համակարգի պահպանման, մարզպետարանի կարիքների համար 2018թ. պետական բյուջեով նախատեսված և համապատասխան ծախսային ծրագրերի իրականացման նպատակով գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանացանկում ընդգրկված ապրանքանյութական արժեքների ձեռքբերման, հաշվառման, մարզպետարանին ամրացված անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների պաշտպանության և այդ գույքի արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների, մարզպետարանի վարչական շենքի կոմունալ ծառայությունների տեխնիկական, ինչպես նաև տրանսպորտային սպասարկման ապահովման ուղղությամբ՝ նպատակ ունենալով ՀՀ օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների իրականացման գործում կազմակերպական խնդիրների լուծումը և մարզպետարանի գործունեության օպերատիվության ապահովումը:

2018թ. մուտքագրվել է ընդհանուր քանակով 24530 և առաքվել 7499 փաստաթուղթ, նախապատրաստվել են ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից մարզպետարանում հրավիրված մարզի խորհրդի 4 նիստի, 18 խորհրդակցությունների և 3 զորակոչային հանձնաժողովի նիստի կազմակերպման ու արձանագրման աշխատանքները:

Մարզպետարան առաջարկություններով, դիմումներով և բողոքներով քաղաքացիների դիմելը դիտելով որպես անձի իրավունքների իրականացման և պահպանման, բնակչության հետ մարզպետարանի կապերի ամրապնդման կարևորագույն միջոց, հետևողական աշխատանքներ են կատարվել օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննության առնելու, օրենսդրությանը համապատասխան դրանցում արծարծված խնդիրների լուծումն ապահովելու և պատասխանելու նպատակով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ, 2018թ. ստացվել է քաղաքացիների 3403 դիմումներ, 79 առաջարկություններ և 218 բողոքներ /ընդհանուր թվով՝ 3700 տարաբնույթ նամակներ/, որոնք, ինչպես մարզպետարանի, այնպես էլ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ուղարկված պատկան մարմինների կողմից օրենսդրությանը համապատասխան ստացել են իրենց հնարավոր լուծումները: Արդյունքում՝ հաշվետու ժամանակահատվածում վերը նշված 3700 նամակներից պատասխան է տրվել 2542-ին, որից դրական լուծում է ստացել 1889-ը, մերժվել է 4-ը, իսկ 649-ին օրենսդրությանը համապատասխան տրվել է պարզաբանում:

Քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները օպերատիվ և արդյունավետ քննարկելու և օրենսդրությանը համապատասխան լուծումներ տալու նպատակով քարտուղարությունը աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ և ՀՀ Արմավիրի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կարգին համապատասխան 2018թ. ապահովվել է նաև մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության կազմակերպումը՝ յուրաքանչյուր ամսվա հինգշաբթի օրերին կազմակերպված ընդունելություններին մասնակցել են ընդհանուր թվով 460 քաղաքացիներ, տարաբնույթ հարցադրումներով, որոնք օրենսդրությանը համապատասխան նույնպես ստացել են իրենց հնարավոր լուծումները՝ 460 հարցադրումներից 225-ին տրվել է դրական լուծում, 44-ը մերժվել է, իսկ 130-ին օրենսդրությանը համապատասխան տրվել է պարզաբանում:

Նշված ժամանակահատվածում մարզպետի մոտ կազմակերպված յուրաքանչյուր ընդունելությունից հետո քարտուղարությունը մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և

հասարակայնության հետ կապերի բաժնի միջոցով ապահովել է բարձրացված հարցերի քննարկման արդյունքների մասին մարզպետարանի http://armavir.mtad.am/ կայքէջով համապատասխան տեղեկատվության հրապարակումը: Կազմակերպված քաղաքացիների ընդունելության, քաղաքացիների առաջարկությունների, դիմումների ու բողոքների քննարկումների մասին քարտուղարության կողմից նախապատրաստված համապատասխան ձևաչափերով հաշվետվությունները սահմանված կարգով և ձևաչափով ներկայացվել է նաև ՀՀ վարչապետի աշխատակազմ և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

2018թ. գործնական աշխատանքներ են տարվել մարզպետարանի կարիքների համար 2018թ. պետական բյուջեով նախատեսված և համապատասխան ծախսային ծրագրերի իրականացման նպատակով գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանացանկում ընդգրկված ապրանքանյութական արժեքների ձեռքբերման, հաշվառման, մարզպետարանի աշխատակազմին ամրացված անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների պաշտպանության և այդ գույքի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների, մարզպետարանի վարչական շենքի կոմունալ ծառայությունների տեխնիկական, ինչպես նաև աշխատակազմի տրանսպորտային սպասարկման ապահովման ուղղությամբ:

Աշխատանքներ են կատարվել նաև մարզպետարանի արխիվային փաստաթղթերի մշակման, արխիվային ֆոնդի գործերի և համապատասխան փաստաթղթերի սահմանված կարգով արխիվ հանձնման, ընդունման, հաշվառման, պահպանման, մատչելիության ապահովման, դրանց հիմքերի մշակման և հետագայում արխիվային պահպանության հանձնելու ուղղությամբ:

Ապահովվել է մարզպետարանում գաղտնի գործավարության աշխատանքների իրականացումը:

2018թ. մարզպետի կողմից ընդունվել և արձակվել են համապատասխանաբար 444 որոշումներ և 181 կարգադրություններ և գլխավոր քարտուղարի 407 հրաման:

Մարզպետարան առաջարկություններով, դիմումներով և բողոքներով քաղաքացիների դիմելը՝ դիտելով որպես անձի իրավունքների իրականացման և պահպանման, բնակչության հետ տարածքային կառավարման մարմնի կապերի ամրապնդման կարևորագույն միջոց, մարզպետարանը իր իրավասությունների շրջանակներում հետևողական աշխատանքներ է կատարել օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննության առնելու, դրանց պատասխանելու և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ: 2018թ. պատասխանվել է քաղաքացիներից ստացված բազմաթիվ դիմումների, որոնց գերակշիռ մասը վերաբերել է բնակարանային, հողային խնդիրներին, դրամական աջակցության, խախտված իրավունքների վերականգման, օրենսդրության պարզաբանման հարցերին, որոնք սահմանված կարգով ստացել են իրենց հնարավոր լուծումները: Գործնական աշխատանքներ են տարվել նաև մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավար մարմինների կողմից ընդունված իրավական ակտերն ուսումնասիրելու և գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվել նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերն ուսումնասիրելու ուղղությամբ, որորց արդյունքում պատրաստվել են բազմաթիվ առարկություններ՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին օրենսդրությանը հակասող որոշումները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին: Իրականացվել են աշխատանքներ համայնքների աշխատակազմերի քարտուղարների հետ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների ուսուցման, ինչպես նաև <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված իրավասությունների ուղղությամբ:

Վերահսկողություն է իրականացվել հողային օրենսդրության շրջանակներում համայնքների ղեկավարների կողմից նրանց տնօրինության ներքո գտնվող հողերի աճուրդային կարգով իրացման, վարձակալության տրամադրելու գործընթացի նկատմամբ: Իրավական վերահսկողություն է իրականացվել համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից ընդունված իրավական ակտերի նկատմամբ: Իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել մարզի թվով 38 համայնքներում:

2018թ.դատական մարմիններում է գտնվում թվով 3 դատական գործ:

01.01.2018թ. դրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետարանի հաստիքային միավորների թիվը 129-ը, որից 109-ը՝ քաղաքացիական ծառայության պաշտոն:

2018թ. հայտարարվել է 1 մրցույթ (մրցույթի անցկացման նախկին կարգին համապատասխան), որի համար մշակվել և համակարգչային տեղեկատվական բազայում տեղադրվել են մրցութային համապատասխան հարցաշարերը:

Սահմանված կարգով և ժամանակահատվածում հաստատվել և տարեսկզբին ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ են ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը:

ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությամբ 2 քաղաքացիական ծառայողի պաշտոնավարման ժամկետը 1 տարով երկարաձգվել է մինչև 66 տարին լրանալը, ևս 1 քաղաքացիական ծառայողի պաշտոնավարման ժամկետը երկարաձգվել է 2 ամսով: Արտամրցութային կարգով կատարվել է 2 նշանակում: Իրականացվել է համապատասխան դասային աստիճաններ շնորհելու գործընթաց՝ 3 քաղաքացիական ծառայողի շնորհվել է քաղաքացիական ծառայության համապատասխան և 17-ին՝ քաղաքացիական ծառայության ավելի բարձր դասային աստիճան:

28.12.2018թ. դրությամբ մարզպետարանում քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնների թիվը 12-ն է /ծածկագրեր՝ 63-1.1-1, 63-2.1-2, 63-2.1-6, 63-2.2-24, 63-2.2-31, 63-2,3-20, 63-3.1-12, 63-3.1-13, 63-3.2-23, 63-4.1-20, 63-4.1-24, 63-4.3-20/, որոնց համալրելու նպատակով ՀՀ կառավարության 2018թ. հուլիսի 10-ի N 792-Ն որոշման համաձայն՝ քաղաքացիական ծառայության ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու համար մարզպետարանում հայտարարվել են մի շարք մրցույթներ:

Հայեցողական պաշտոններից թափուր են մարզպետի տեղակալի 1 հաստիքը և մարզպետի տեղակալի օգնականի 1 հաստիքը: Սահմանված կարգին համապատասխան մրցույթները հայտարարվում և պարբերաբար տեղադրվում են ՀՀ Արմավիրի մարզպետարանի կայքէջում:

Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացրել է քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքները: Ըստ հաստատված պլան-գրաֆիկի վերապատրաստվել է 34 քաղաքացիական ծառայող: Այլ ծրագրերով Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում վերապատրաստվել են 12 քաղաքացիական ծառայողներ:

2018թ. կնքվել է 13 անորոշ և 6 ժամկետային աշխատանքային պայմանագիր, լուծվել 3 ժամկետային և 14 անորոշ ժամկետով կնքված պայմանագիր, միաժամանակ համաձայնագրով երկարացվել է 13 ժամկետային աշխատանքային պամանագրի ժամկետ:

2018թ. մարզային ենթակայության 8 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հետ կնքվել են ժամկետային աշխատանքային պայմանագրեր, կազմվել և վարվել են համապատասխան անձնական գործեր, 11 պայմանագիր լուծվել է գործողության ժամկետն ավարտվելու, 8-ը տնօրենի 65 տարին լրանալու և 2 պայմանագիր՝ անձնական դիմումի համաձայն:

Մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններից՝ «Քեվօրք և Անիթա Փակումեանների հիշտակի «Հիսուսի մանուկներ» առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են մրցույթներ, որոնց արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների հետ կնքվել են ժամկետային աշխատանքային պայմանագրեր: Սահմանված կարգին համապատասխան հայտարարության տեքստերը համաձայնեցվել են ՀՀ առողջապահության նախարարության հետ և տեղադրվել պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքէջում և «Հայրենականչ» թերթում: Սահմանված կարգին համապատասխան ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել են մրցույթի համար փոփոխության ենթարկված հարցաշարերը, որոնք տեղադրվել են համապատասխան մրցութային ծրագրում:

Փոփոխության են ենթարկվել մարզպետարանի թվով 69 քաղաքացիական ծառայողների դրույքաչափերը:

Ապահովվել է մարզպետարանում ուսումնական հաստատության 31 ուսանողի պրակտիկայի կազմակերպումը: Աշխատանքները շրջանառվել են «Mullberry» ծրագրով: Իրականացվել են անձնակազմի կառավարման գծով մարզպետի 227 որոշումների, 75 կարգադրությունների և գլխավոր քարտուղարի 407 հրամանների նախագծերի նախապատրաստման և ստորագրման ներկայացման աշխատանքները:

Ներքին աուդիտի 2018թ. տարեկան և ռազմավարական ծրագրին համապատասխան թվով 36 պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացվել է ֆինանսական աուդիտ, Արմավիրի մարզի թվով 6 բուժհաստատություններում («ՀՀ Արմավիրի մարզի Քեվօրք և Անիթա Փակումեանների հիշատակի «Հիսուսի մանուկներ» ՓԲԸ, «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Արմավիրի արյան փոխներարկման կայան» ՊՓԲԸ, «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ, «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ, «Էջմիածին ԲԿ» ՊՓԲԸ) իրականացվել է ֆինանսական աուդիտ, Արմավիրի մարզպետարանի 5 բաժիններում, 1 վարչությունում՝ համապատասխանության աուդիտ, որոնց արդյունքների մասին կազմվել են աուդիտորական հաշվետվություններ և եզրակացություններ:

Հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարության IA_Application միասնական կառավարման համակարգ:

Հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է ներքին աուդիտի կոմիտեի 5 նիստ, որոնց ընթացքում կատարվել է աուդիտորական հաշվետվությունների քննարկում և կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Ներքին աուդիտի բաժնի թվով 5 աշխատակիցները մասնակցել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից անցկացվող շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին և հաջողությամբ հանձնել թեստը:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման ու համայնքային ծառայության հարցեր

2018թ.ապահովվել է մշտական կապը տեղական ինքնակառավարման մարմինների հետ և նրանց տրամադրել է անհրաժեշտ խորհրդատվություն իրենց սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման հարցերով, ինչպես նաև վերահսկել է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը և պարտադիր լիազորությունների կատարումը:

Մշտական հսկողություն է իրականացվել մարզի համայնքների ավագանու նիստերի հրավիրման պարբերականության, ավագանու և համայնքի ղեկավարի որոշումները, համայնքի ղեկավարի կարգադրությունները սահմանված կարգով մարզպետարան ներկայացնելու նկատմամբ և դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը, ինչպես նաև համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում-բողքներին, առաջարկություններին, քաղաքացիների ընդունելություններին և նրանց կողմից բարձրացրած հարցերին օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանելուն:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 19.01.2018թ. <<Տաեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին>> N 15-Ա հրամանի սահմանված ժամանակացույցի համապատասխան որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբերը 2018թ. ընթացքում մարզի՝ 38 համայնքներում իրականացվել են վարչական հսկողության աշխատանքներ:

Հսկողություն է իրականացվել համայնքային ծառայության, համայքապետարաններում կադրային գործի վարման ուղղությամբ: <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան համայնքներից պատբերաբար ստացվել են ամենամսյա և կիսամյակային տեղեկությունները և ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

2018թ. ընթացքում մարզի համայնքների ղեկավարների կողմից համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար տրվել է թվով 80 հայտարարություն, կայացել է 62 մրցույթ, հաղթող ճանաչված մասնակիցները նշանակվել են համապատասխան պաշտոններում: Մարզի համայնքներում կայացել են համայնքային ծառայության պաշտոներ զբաղեցնող 97 համայնքային ծառայողների ատեստավորումներ:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությանը, զորահավաքային նախապատրաստությանն առնչվող հարցեր

2018թ. հաստավել է ՀՀ Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման հիմնական միջոցառումների պլանը և ուղարկվել Արմավիրի մարզային փրկարարական վարչություն: Մասնակցություն է ցուցաբերվել ՀՀ ԱԻ նախարարության կողմից կազմակերպված միջոցառումներին, քննարկումներին, դասընթացներին, 2018թվականի սեպտեմբերի 10-13-ը կազմակերպված <<Շանթ-2018>> հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը:

Մարզպետարանը մշտապես համագործակցել և աջակցել է մարզային զինկոմիսարիատներին: Ապահովվել է 2018թ. ձմեռային և ամառային զորակոչի առաջին օրվա միջոցառումը: Վերջին 7-8 տարիներին նորակոչիկները բանակ են ճանապարհվում Սարդարապատի հուշահամալիրում զոհված ազատամարտիկներին հարգանքի տուրք մատուցելով, երգ-երաժշտության ուղեկցությամբ և մարզպետի կողմից նվերներ ստանալով: Զորակոչային պլան-առաջադրանքները կատարվել են 100%-ով:

Ուշադրության կենտրոնում է մարզի երեք կազմակերպություններում այլընտրանքային ծառայություն կատարող անձանց աշխատանքային և կենցաղային պայմանների ապահովման և իրենց օրենքով սահմանված կարգով պարտականությունների կատարման ուղղությամբ:

Այլընտրանքային ծառայության վերաբերյալ հավաքվել է տեղեկատվություն մարզի երեք քաղաքներից և ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության համապատասխան հանձնաժողովին:

Մարզպետարանը մասնակցել է մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի կազմակերպմանը և ապահովմանը, զորակոչից և հաշվառումից խուսափող զորակոչիկների հայտնաբերման գործընթացին, նախազորակոչային տարիքի պատանիների կցագրման, ռազմական ուսումնական հաստատություններում սվորել ցանկացողներով համալրմանը, մարզային զինկոմիսարիատից տեղեկատվության հավաքման ապահովմանը, ապահովվել է ՀՀ կառավարության 27.05.2010թ. N 657-Ն որոշման կատարաման ընթացքը, իրականացվել են աշխատանքներ մարզի բոլոր համայնքերում և կազմակերպություններում զինվորական հաշվառման, կազմակերպման, նաև գրանցամատյանների ճիշտ վարման ուղղությամբ:

Շարունակվել է համագործակցությունը սահմանապահ 2037 ռուսական և մարզային տարածքում տեղակայված հայկական զինվորական զորամասերի հետ: Սահմանված ժամկետներում ուսումնասիրվել և պատասխանվել են ստացված գրություններին և անհրաժեշտ աջակցություն է՝ ցուցաբերվել:

Ապահովվել է զինվորական զորամասերի, մարզի գործադիր մարմինների ստորաբաժանումների փոխհարաբերությունները և կապը համայնքների հետ:

Ապահովվել է համագործակցությունը մարզում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ, վետերանների խորհրդի և ԿԽ մարզային կազմակերպությունների հետ կազմակերպել են մի շարք միջոցառումներ /Հայրենական մեծ պատերազնում տարած հաղթանակի 73 ամյակին նվիրված տոնակատարությունների նախապատրաստման և անցկացման միջոցառումներ/:

2018թ. մարզի 32 քաղաքացիներից ստացվել են դիմումներ ՌԴ մուտքի թույլտվության արգելքը վերացնելու վերաբերյալ, որոնք ուղարկվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայություն, ստացված պատասխանների և պարզաբանումների մասին տեղեկացվել է դիմումատու քաղաքացիներին:

Մարզպետարանն ակտիվ մասնակցությունն է ունեցել 2018 թվականի սեպտեմբերի 11-ից 13-ը անցկացված «Շանթ-2018» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությանը:

Մշակվել է մարզի 6 համայնքների և թվով 4 պարենային ապրանք արտադրող ընկերությունների համապատասխան պլանները: Նախապատրաստվել և իրականացվել են տարեկան պլանով նախատեսված առանձնացված շտաբային մարզումներ համապատասխան մարմինների հետ: Համակարգվել են մարզի բոլոր համայնքների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պլանների ճշգրտման աշխատանքները: Իրականացվել է մարզպետարանի աշխատակից զինապարտ քաղաքացիների հաշվառում, զինապարտ աշխատակիցների տվյալները ըստ սահմանված կարգի ուղարկվել է մարզի զինվորական կոմիսարիատ: Արմավիրի մարզի զինվորական կոմիսարիատի հետ իրականացվել են մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների ապաամրագրման աշխատանքներ:

2018թ. կազմակերպվել է քննարկում «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ՝ մարզին վերաբերող մասով առաջարկություններ են ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Ֆինանսական բնագավառ

2018թ. ընթացքում կազմակերպվել և իրականացվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի և ենթակայության 113 ՊՈԱԿ-ների և 6 ՊՓԲԸ-ների 2018թ. պահպանման ծախսերի նախահաշիվների և

հաստիքացուցակների կազմման և հաստատման, տարեֆիկացիոն մատյանների ու դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրության և վերլուծության աշխատանքներ: Կազմվել են մարզային ենթակայության ՊՈԱԿ-ների հետ 2018թ. ուսուցման գծով պետական պատվերի ծառայությունների փաթեթները և իրականացվել նախահաշիվների կազմման և ճշգրտման աշխատանքներ: Յուրաքանչյուր ամիս կազմվել են մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվող ծրագրերի ֆինանսավորման հայտերը և իրականացվել դրանց ֆինանսավորումը, որի կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Մշակվել են մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի 2019-2021թթ. միջնաժամկետ զարգացման ծախսային ծրագրերը և բյուջետային հայտերը: Իրականացվել է մարզային ենթակայության 113 ՊՈԱԿ-ների կատարված բյուջետային ծախսերի և պարտքերի մասին հաշվետվությունների ընդունում, ամփոփում և ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարություն, մարզպետարանի ենթակայության 6 առողջապահական ՊՓԲԸ-ներից ստացված ֆինանսատնտեսագիտական մոնիթորինգի վերաբերյալ ցուցանիշների ճշգրտման, ամփոփման և պետ. գույքի կառավարման կոմիտե ներկայացման աշխատանքները: Կատարվել է մարզային ենթակայության ՊՈԱԿ-ներից ստացված տարեկան և եռամսյակային հաշվետվությունների վերլուծություն, տեղ գտած խնդիրների ուսումնասիրություն և առաջարկությունների նախապատրաստում: Ընդունվել են մարզպետարանի ենթակայության 6 առևտրային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների N 2 և 3 հավելվածները, շահութաբաժնի հաշվարկները, շահութահարկի հաշվարկներն ու առաջարկությունները և ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Իրականացվել են մարզպետարանի կարիքների 2018թ. գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման ընթացակարգերը: Ցուցաբերվել է մեթոդական և խորհրդատվական օգնություն համայնքներին՝ 2018թ. բյուջեների փոփոխության գործընթացում: Իրականացվել են մարզի համայնքների 2019թ. հաստատված բյուջեների գործող օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ ուսումնասիրություններ, ինչպես նաև 2018թ. ճշտված բյուջեների ամփոփում և ներկայացում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Կազմվել են 2018թ. պետական բյուջեի միջոցների հաշվին մարզպետարանի կարիքների համար անհրաժեշտ աշխատանքների, ծառայությունների, ապրանքների անվանացանկերը: ՀՀ Արմավիրի մարզի 97 համայնքներից ընդունվել է բյուջեների եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի վերաբերյալ ամսական և եռամսյակային հաշվետվություններ, ամփոփել և ներկայացրել վերահսկիչ պալատ, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Կազմակերպվել և իրականացվել է մարզի համայնքների բյուջեների եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների հաջորդ տարվա բյուջեների եկամուտների կորուստները հաշվարկելու համար պահանջվող տեղեկատվության հավաքագրման, ստուգման և ըստ համայնքների ամփոփման աշխատանքները: Ընդունվել և ամփոփվել է պետական բյուջեից մարզի համայնքների բյուջեներին դոտացիայի հատկացման ընթացքի, համայնքների բյուջեներին ամրացված եկամուտների կատարման ընթացքի և բյուջեներով կատարվող ծախսերի ընթացիկ տարվա աշխատավարձերի ծախսերի կատարման մասին տեղեկատվությունը: Իրականացվել է մարզպետարանի հաշվապահական հաշվառման, ֆինանսական, հարկային, սոցիալական ապահովության պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվությունների ներկայացում համապատասխան մարմիններին:

Մարզպետն իր լիազորությունների և իրավասությունների շրջանակներում աշխատանքներ է տարել ՀՀ պետական բյուջեից մարզպետարանին, մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև մարզպետարանի միջոցով ֆինանսավորվող բնագավառներին և ծրագրերին նախատեսված միջոցների հատկացման ուղղությամբ, սահմանված կարգով վերահսկել դրանց նպատակային օգտագործումը:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից իրականացված ծախսերն /31.12.2018թ. դրությամբ/ ունեն հետևյալ պատկերը.

	2018թ. նախատեսված (հազ.դրամ)	2018թ. ֆինանսավորում (հազ.դրամ)	2018թ. փաստացի ծախս (հազ.դրամ)
ՀՀ Արմավիրի մարզպետարանի պահպանում	506438.6	499169.3	499169.3
Կառավարման մարմինների կարողությունների զարգացում	-	-	-
Արտասահմանյան գործուղումներ	-	-	-
Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարի տրամադրում	4547.4	4499.7	4499.7
Մշակութային միջոցառումների իրականացում /կառ. որոշմամբ/	7300.0	7300.0	7300.0
Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	54608.0	54608.0	54608.0
Մշակութային միջոցառումների իրականացում	2395.0	805.0	805.0
Մշակութային օբյեկտների հիմնանորոգում	18636.7	18636.7	18636.7
Նախադպրոցական (կրթություն)	138883.9	138882.5	138882.5
Հանրակրթական ուսուցում	6193314.2	6193208.2	6193208.2
Հատուկ կրթություն	139728.5	139728.5	139728.5
Ներառական կրթություն	454703.4	454703.4	454703.4
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	38039.8	38039.8	38039.8
Կրթական օբյեկտների հիմնանորոգում	125360.0	119092.0	119092.0
Կրթական հիմնարկների շինարարություն	-	-	-
Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	-	-	-
Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթի ապահովում	321768.0	290776.5	290776.5
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	307457.9	307157.7	307157.7
Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական ապահովում	3930.0	3930.0	3930.0
Ընդամենը	**8317111.4**	**8270534.3**	**8270534.3**
Դոտացիա	4380751.8	4380751.8	4380751.8
Ընդամենը	**12697863.2**	**12651286.1**	**12651286.1**

Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառ

ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով՝ ՀՀ կառավարության 2018թ. մայիսի 3-ի N 534-Ա որոշմամբ, ՀՀ Արմավիրի մարզպետարանի ծրագրերով մարզին հատկացվել է 143996.7հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսված է իրականացնել՝

1. «Մշակութային օբյեկտների հիմնանորոգում» 18636.7 հազ.դրամով իրականացվել են Շենիկ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները: Հետագա տարիներին մնում է կատարել 34698.7հազ. դրամի շինարարական աշխատանքներ:

2. «Կրթական օբյեկտների հիմնանորոգում» 125360.0 հազ. դրամով նախատեսված է իրականացնել Թաիրով գյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքներ: 2018թ. կատարվել են 62077.78 հազ. դրամի շինարարական աշխատանքներ, իսկ մանցած 63282.2հազ. դրամի շինարարական աշխատանքները տեղափոխվել են 2019թ. առաջին կիսամյակ, նշված երկու ծրագրերի շինարարական աշխատանքները սկսվել են 2017 թվականին:

Շենիկ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների կատարման համար 16.05.2017թ. կնքվել է N ՀՀ ԱՄ ԲԸԱՇՁԲ-17/01 պայմանագիր՝ ընդհանուր 72924.0 հազ. դրամ արժեքով: 2017թ. կատարվել են 19588.6հազ. դրամի շինարարական աշխատանքներ:

Թաիրով գյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքների կատարման համար 16.05.2017թ. կնքվել է N ՀՀ ԱՄ ԲԸԱՇՁԲ-17/02 պայմանագիր՝ ընդհանուր 154800.0 հազ. դրամ արժեքով: 2017թ. կատարվել են 29400.7հազ դրամի շինարարական աշխատանքներ:

Ուսումնասիրվել և ճշգրտվել է մարզում առկա վթարային օբյեկտների, կիսակառույցների, ինչպես նաև առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեցող օբյեկտների ցանկը և ծրագրերում ներառելու նպատակով առաջարկություն է ներկայացվել համապատասխան մարմիններին:

Վերահսկողություն է իրականացվել համայնքների քաղաքաշինության գործունեությունների, այդ թվում՝ անօրինական շինարարությունների կանխման, կասեցման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ:

Ուսումնասիրվել և հաշվարկվել է մարզի 9 համայնքներում (ք.Արմավիր, Ալաշկերտ, Արշալույս, Բամբակաշատ, Լեռնագոգ. Մրգաշատ, Մյասնիկյան, Սարդարապատ և Տարոնիկ) 2018թ. ընթացքում արտակարգ իրավիճակների՝ ուժեղ քամու, պտտահողմի, կարկուտի հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող շենք-շինություններին պատճառված վնասները և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություններ:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատման 36 փաթեթ (հողահատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրում, ճարտարապետահատակագծային նախագծերի փաստաթղթերի համաձայնեցում) համաձայնեցվել է քաղաքաշինության կոմիտեի հետ:

Նոր կառուցվող, հինանորոգվող և վերանորոգվող շենք-շինությունների նախագծման ու կառուցման աշխատանքներում առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ իրենց կողմից տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներում պարտադիր կերպով վերահսկել տանիքների գույների սահմանափակումները, հետևել դրանց կատարմանը՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի համաձայնեցման, շինարարության և շինարարության ավարտի փաստագրման ժամանակ:

Համակարգվել է մարզի համայնքներում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ 21 ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին հանձնելու գործընթացը:

Արդյունաբերության, բնակարանային կոմունալ և անշարժ գույքի կադաստրի և աղբահանության բնագավառ

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթների պահանջների պարտադիր կատարման նպատակով՝ համակարգվել է համայնքների կողմից ստուգումների և հսկողության արդյունքների իրականացումը և ամփոփ տեղեկատվության ապահովումը: Մարզում առկա են 1485 առևտրի և սպասարկման օբյեկտներ, այդ թվում՝

- առևտրի օբյեկտ՝ 1184
- հանրային սննդի օբյեկտ՝ 114
- կենցաղսպասարկման օբյեկտ՝ 187:

Արդյունաբերության, բնակարանային կոմունալ և անշարժ գույքի կադաստրի բնագավառում 2018թ. կազմակերպվել և համակարգվել է ենթակառուցվածքների, արդյունաբերական ձեռնարկությունների և անշարժ գույքի կադաստրի գործունեությունը:

Մարզի բնակչության շրջանում աղիքային վարակիչ հիվանդությունների և ջրային բռնկումների կանխարգելումից խուսափելու համար առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

Մարզի համայնքների սանիտարական մաքրման և աղբահանության վիճակի վերահսկման նպատակով պարբերաբար ստուգայցեր են կատարվում մարզի համայնքներ:

Բնակավայրերի մաքրման և աղբահեռացման ուղղությամբ մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից պարբերաբար ստուգայցեր են կատարվել համայնքներ և տեղ գտած թերությունների վերացման նպատակով համապատասխան հանձնարարականներ են տրվել համայնքների ղեկավարներին՝ կազմակերպելով և համակարգելով վերջիններիս գործունեությունը տվյալ ոլորտում: Մարզում առկա է 46 օրինական աղբավայր: Աղբահանության պլանավորված եկամուտը 311.8 մլն դրամ է:

Կազմակերպվել և համակարգվել են «Մաքուր Հայաստան» և «Մաքուր մոլորակ» ծրագրերի շրջանակներում անցկացված միջոցառումները՝ ուղղված աղբահանության աշխատանքների իրականացմանը: Համայնքներից ընդունվել, ամփոփվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել աղբահանության գծով ամսական հավաքագրված գումարների և կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ:

Ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում իրականացվել են ջրային կոմիտեի կազմակերպությունների կողմից սպասարկվող համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքների համակարգման և կազմակերպման գործընթացները:

Ճանապարհաշինություն

Արմավիրի մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 617.2 կմ, որից 123.2 կմ միջպետական նշանակության, 91.6կմ հանրապետական նշանակության և 402.4կմ մարզային նշանակության (155կմ գտնվում է անբարեկարգ վիճակում):

2018թ. պետական բյուջեից Արմավիրի մարզպետարանին մարզային նշանակության ճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանման և շահագործման համար հատկացվել է 54.608 մլն դրամ, որից 7.6 մլն դրամը նախատեսված է 68.7 կմ ձմեռային պահպանության, իսկ 47.0 մլն դրամը՝ 41.0 կմ ընթացիկ պահպանման ու շահագործման համար:

Պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներով հիմնանորոգվել է Մ-5 «Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման» միջպետական նշանակության ավտոճանապարհի (կմ 43+800-կմ53+200) 9.4կմ

երկարությամբ հատվածը (Նորապատից-Սարդարապատի հուշահամալիր)՝ շուրջ 1,094.0 մլն. դրամ արժողությամբ:

Պետական բյուջեի միջոցների հաշվին նորոգվել է Մ-5 «Երևան-Արմավիր-Թուրքիայի սահման» միջպետական նշանակության ավտոճանապարհի Պտղունք համայնքի հատվածի 200մ երկարությամբ ճանապարհի ջրահեռացումը՝ 22.0 մլն դրամ արժողությամբ:

Տրանսպորտ

Մարզի գրեթե բոլոր համայնքները կապված են տրանսպորտային կապով մարզկենտրոնի հետ: Մարզի համայնքներից մարզկենտրոն և տարածքային կենտրոնների ուղղություններով գործում են 11 ավտոբուսային (21 ավտոբուս) և 11 միկրոավտոբուսային (25 միկրոավտոբուս) ներմարզային երթուղիներ, իսկ մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում են 16 ավտոբուսային և միկրոավտոբուսային միջմարզային երթուղիներ: Մարզկենտրոնից դեպի այլ մարզեր գործում են 3 ավտոբուսային և 2 միկրոավտոբուսային երթուղիներ:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ

Մարզի 123096,4 հեկտար վարչական տարածքում 97038,5 հեկտարը գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 41970,05 հեկտարը 2018թ. օգտագործվել է գյուղատնտեսական արտադրության մեջ՝ 25640,22հա վարելահողեր, 6915,14հա խաղողի և 9414,69հա պտղատու այգիներ:

Գյուղատնտեսական արտադրության մեջ ընդգրկված հողատարածքները, ըստ առանձին մշակաբույսերի, տնօրինվել են հետևյալ կերպ. 2018թ. մարզում հիմնվել է 650,07հա բազմամյա տնկարքներ, որից 511,74հա պտղատու և 138,33հա խաղողի այգիներ:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հ/հ	Մշակաբույսի անվանումը	Տարածքը /հա/	Միջին բերքը գ/հա	Համախառն բերքը /հազ.տ/	Այդ թվում՝ հավաքված է կրկնակի միջշարային տարածություններից
1.	Հացահատիկ	3847,72	37,7	14,49	--
2.	Հատիկաընդեղեն	185,18	31,2	0.56	--
3.	Կարտոֆիլ	1417,39	928,5	44,15	1,84
4.	Բանջարեղեն	8885,39	286,5	271,3	24,19
5.	Բոստան	3050,85	250.7	76,18	--
6.	Բազմամյա և միամյա խոտաբույսեր	8976,38	95,6	97,1	11,2
7.	Տեխնիկական	920,52	16,7	1,22	--
8.	Խաղող	6915,14/6236,67	136,8	85,33	--
9.	Պտուղ	9414,69/7776,76	117,5	91,77	--
	Ընդամենը	41970,05			

2018թ. գյուղատնտեսական տարին սկսվել էր բարեհաջող և գրեթե բոլոր մշակաբույսերի գծով սպասվում էր բարձր բերք: Ինչպես հանրապետության, այնպես էլ մարզի վարչական տարածքը ապահովագրված չէ բնակլիմայական աղետների վնասներից:

2018թ. ապրիլ-մայիսին տեղի ունեցած ցրտահարությունը, կարկտահարությունները և ջրհեղեղը մեծ վնաս պատճառեցին մարզի գյուղատնտեսական արտադրությանը: Մարզի 65 համայնքների 6878 շահառուներին պատկանող 4034,99հա հողատարածությունները վնասվեցին տարերային աղետներից՝ 20-100%-ով: Տարերային աղետների հասցրած վնասները գնահատվել են շուրջ 5,3 մլրդ. դրամ: Բնածին աղետների հասցրած վնասները հնարավորինս մեղմելու նպատակով ՀՀ կառավարության 29.11.2018թ. N 1405-Ն որոշմամբ մասնակի փոխհատուցվել է բնածին աղետներից տուժած 50%-ից բարձր վնասվածության աստիճան ունեցող հողօգտագործողների կրած վնասները՝ 225,35 մլն դրամով: Կարկտահարության ռիսկերը մեղմելու նպատակով մարզի 7 համայնքներում 8 սուբյեկտների պատկանող 82,9հա խաղողի և պտղի տարածությունները պատվել են հակակարկտային ցանցերով:

2018թ. ընթացքում մարզի գյուղացիական տնտեսություններից մթերող կազմակերպությունների կողմից մթերվել է 1448 տոննա պտուղ, 6355 տոննա բանջարեղեն և 47410 տոննա խաղող:

Մեծ աջակցություն է ցուցաբերվել առանձին տնտեսվարող սուբյեկտներին և արտահանող կազմակերպություններին՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման գործում:

01.01.2018թ. դրությամբ մարզում հաշվառվել են 59916 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր՝ 20423, մանր եղջերավոր՝ 109522, խոզեր՝ 24227, թռչուններ՝ 1058638: Համակարգվել և վերահսկվել է մարզային անասնաբուժական ծառայության գործունեությունը, հակահամաճարակային միջոցառումներն իրականացվել են ամբողջությամբ: Հակահամաճարակային իրավիճակը բնութագրվում է կայուն:

2018թ. ընթացքում արտադրվել է 7324 տոննա տավարի, 2310 տոննա ոչխարի, 944 տոննա խոզի, 1201տոննա թռչնի միս, 966 տոննա ձուկ, 49600 տոննա կաթ, 217.3 տոննա բուրդ և 56.8 մլն հատ ձու:

Համակարգվել է մարզում գործող «Ոռոգում-Ջրառ» ՓԲԸ-ի և 3 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունը՝ ոռոգման համակարգի սպասարկման, կառուցման ու վերականգնման, ոռոգման ջրի վարձավճարների գանձման ուղղությամբ: Վերահսկվել է ջրատնտեսական համակարգերի գործունեությունը, ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների իրականացման ընթացքը: Համապատասխան հանձնաժողովի կողմից վերահսկվել և կարգավորվել են տարաբնույթ նշանակության ջրատարների, մայր ջրանցքների և ջրամղիչ կայանների մաքրման և վերականգնման աշխատանքները, արդյունքում՝ 240,35կմ միջտնտեսային, 3943,8կմ ներտնտեսային ցանցերը, 333 խորքային հորերը և 55 պոմպակայանները պատրաստ են եղել ջրամատակարարմանը, որը սկսվել է մարտի 18-ին: 2018թ. բնութագրվել է որպես սակավաջուր, քանի որ 40 մլն մետր խորանարդով պակաս էր լցվել Ախուրյանի ջրամբարը, իսկ գետերում ջրի ելքը նվազել է: Ոռոգման բնագավառում ստեղծված լարվածությունը մեղմելու նպատակով սահմանվել է ջրաշրջանառություն և կազմվել ջրամատակարարման հստակ գրաֆիկ, միաժամանակ վերանորոգվել են խորքային հորերը և ոռոգման նպատակով օգտագործվել են համայնքների հաշվեկշռում գտնվող խմելու ջրի նպատակին ծառայող խորքային հորերի հզորությունները: Լրացուցիչ ջրառ է իրականացվել Սևանա լճից, որից բաց թողնվող ջրի օպտիմալ և հավասարաչափ բաշխումն իրականացնելու և վերահսկելու նպատակով մարզպետի 06.09.2018թ N 301 որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ:

31.12.2018թ. դրությամբ մարզի 25203 ջրօգտագործողներին մատակարարվել է 301,86 մլն. մետր խորանարդ ոռոգման ջուր՝ 3,32 մլրդ դրամ հասույթով, որի դիմաց գանձվել է 1,17 մլրդ դրամ, գանձման մակարդակը կազմել է 35,3%:

Ուսումնասիրվել և գույքագրվել են մարզի տարածքով հոսող Արաքս, Մեծամոր և Քասախ գետերի, ինչպես նաև հեղեղատարների հուների մաքրման և ափապատնեշների ամրացման նպատակով իրականացվելիք աշխատանքները և ներկայացվել ՀՀ կառավարություն:

Վերահսկվել են հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, մարզում առկա 280կմ երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման և վերանորոգման աշխատանքները: 2018թ. պետական բյուջեի միջոցների հաշվին 8 համայնքներում մաքրվել է 44,315 կմ երկարությամբ բաց դրենաժային ցանց: Հիմնախնդիր է մնում առկա շուրջ 280կմ երկարությամբ փակ դրենաժային համակարգի մաքրումը և վերանորոգումը:

Համակարգվել են համայնքներում գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, գարնանացանի իրականացման գործընթացները: Գարնանացանի նախապատրաստական աշխատանքների և ընթացքի վերաբերյալ հարցերը ներկայացվել են մարզխորհրդի նիստերում:

2018թ. գարնանացանի համար անհրաժեշտ սերմացուների հայտերը մարզպետարանը սահմանված կարգով ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: Հաշվետու տարում գարնանացանի և աշնանացանի աշխատանքները խթանելու նպատակով գյուղացիական տնտեսություններին որպես աջակցություն տրամադրվել է.

- 35315կգ գարնանացան գարու՝ 1կգ 130 դրամով սերմացու, որը բաշխվել է 19 համայնքների 93 շահառուների, որոնք 177,3 հա վրա կատարել են ցանքսի աշխատանքներ,
- 3720կգ առվույտի՝ 1կգ 1500 դրամով սերմացու, որը բաշխվել է 11 համայնքների 63 շահառուների, որոնք 149,1հա վրա կատարել են ցանքս:

Ուսումնասիրվել է մարզի գյուղացիական տնտեսությունների պարարտանյութերի նկատմամբ ունեցած պահանջարկը: Մեծ ծավալի աշխատանքներ են տարվել տեղական արտադրության էկոլոգիապես մաքուր կենսապարարտանյութերի շրջանացումը մարզում ապահովելու նպատակով: Մարզի հողօգտագործողներին որպես աջակցություն ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով 2018թ. հատկացվել է.

- 250 տոննա ֆոսֆորական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 102,45 տոննա,
- 250 տոննա կալիումական պարարտանյութ, որից վճարվել և ներկրվել է 91,3 տոննա, որոնք բաշխվել են 586 շահառուների,
- 550000 լիտր դիզելային վառելանյութ, որից վճարվել և ներկրվել է 86658 լիտր, որը բաշխվել է 280 շահառուների:

Ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում մարզի համայնքների 28 շահառուներ ձեռք են բերել 22 տրակտորներ և 20 գյուղ.գործիքներ:

Համակարգվել է մարզի տարածքում գործող ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի մասնագիտական ծառայությունների գործունեությունը և մկնանման կրծողներով տարածվածության հաշվառման մոնիթորինգի իրականացումը: Կատարված մոնիթորինգի արդյունքներով գարնանը և աշնանը մարզին հատկացվել է 449,12կգ Ռոդիֆակում տեսակի մկնասպան պրեպարատ, որը բաշխվել է մարզի համայնքներին, որոնք 5614 հեկտարի վրա իրականացրել են պայքարի աշխատանքներ:

Համակարգվել և վարվել են համայնքներում բազմամյա տնկարկների հիմնման և համապատասխան փաստաթղթային ձևակերպման աշխատանքները:

Շարունակվել է համագործակցությունը գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի մարզային կառույցի հետ՝ գյուղատնտեսական արտադրության ոլորտին օգնություն ցուցաբերելու, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման, բիզնես-ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքների կազմակերպման բնագավառներում:

Ուսումնասիրվել է գյուղատնտեսական արտադրության վարկավորման գործընթացը: Հիմնական վարկատուն եղել է Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկը, որը 2018թ. մարզի 97 համայնքների 10435 վարկառուներին տրամադրել է 10,18 մլրդ դրամ վարկ, որից 2,048 մլրդ դրամը՝ պետական սուբսիդավորմամբ:

Իրականացվել է մասնագիտական խորհրդատվություն հողի մշակության, բույսերի խնամքի, բույսերի և ընտանի կենդանիների հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպման, տարերային աղետներից վնասված ցանքատարածություններում կիրառվելիք ագրոտեխնիկական միջոցառումների կիրառման, որակյալ սերմացուների, տնկանյութերի և թունաքիմիկատների ձեռքբերման, անասնաբուժական բուժպրոֆիլակտիկ միջոցառումների կիրառման, մարզում բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման ու իրականացվող միջոցառումների, մարզում միակ «Որդան կարմիր» պետական ագելոցի, երեք բնական հուշարձանների, կենսաբազմազանության պահպանման ու կենսագործունեության բարելավման ուղղությամբ:

Մարզում կանաչապատ տարածքների ավելացման ուղղությամբ «Հայաստան ծառատունկ» ծրագրի միջոցով կազմակերպել և իրականացրել են տնկումներ՝ շուրջ 2774 ծառեր և թփեր: Մարզի 17 համայնքների տարաբնույթ կազմակերպություններում (համայնքապետարաններ, դպրոցներ, եկեղեցիներ, մշակույթի տներ, անտառ-պուրակներ, զբոսայգիներ, ճանապարհների եզրեր/ իրականացվել են ծառերի ու թփերի հիմնումներ՝ ավելի քան 2,7 հեկտար ընդհանուր մակերեսով:

Համակարգվել են շրջակա միջավայրի և բնապահպանության օրենսդրության կենսագործման աշխատանքները՝ օգտակար հանածոների արդյունահանման համար հողհատկացման տարածքների արդյունավետ օգտագործման, շրջակա միջավայրի պահպանման հարցերը, կատարված ուսումնասիրությունների և ստուգայցերի արդյունքներն ամփոփվել և ներկայացվել են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, ՀՀ բնապահպանության նախարարություններ:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման նպատակով սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացվել մարզի Արտիմետ, Արտաշար, Գայ, Այգեշատ (Էջմ.), Հայթաղ, Արշալույս, Արտամետ, Նորավան, Տանձուտ, Արգավանդ, Լեռնագոգ, Հացիկ, Տալվորիկ, Վանանդ համայնքներում հողերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ հողաշինական գործերը: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով համաձայն ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն որոշման ընդունել ավագանու համապատասխան որոշումներ և կատարել պետական գրանցումներ:

2018թ. ընթացքում մարզի 40 համայնքների հողային հարաբերությունների բնագավառում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտվել է հողային ֆոնդի նպատակային օգտագործմանը չհամապատասխանող 30 դեպք, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների խախտման 15 դեպք: Արդյունքում, համայնքների ղեկավարներին տրվել են համապատասխան ցուցումներ բացահայտված խախտումներն ուղղելու համար: Վերահսկողություն է իրականացվել մարզի համայնքներում հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն կատարելու հետևանքով կատարված աշխատանքների նկատմամբ, հավաքագրվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել տվյալները:

Իրականացվել է համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի աճուրդային վաճառքի և վարձակալության տրամադրման վերաբերյալ տվյալների հավաքագրում, ամփոփում և տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

ՀՀ կառավարության 17.09.2009թ. N 1066-Ն որոշմամբ և ՀՀ Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. N 151 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կազմում կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքում մարզի Էջմիածին, Նորապատ, Շենիկ, Ալաշկերտ, Լենուղի, Ծիածան, Հայկավան, Հացիկ, Բամբակաշատ, Նոր Արտագերս, Տալվորիկ, Գրիբոյեդով, Քարակերտ, Աղավնատուն, Արաքս (Արմ.), Մայիսյան, Արտամետ, Արևիկ, Այգեշատ (Էջմ.) համայնքների համար տրվել է եզրակացություն՝ բարձրարժեք հողատեսքերը ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ (ընդամենը՝ 221.78հա):

2018թ. ապրիլի 12-ից մինչև ապրիլի 20-ը ներառյալ մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի, մարզային հողային պետական տեսչության և անշարժ գույքի կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից իրականացվել են տեսչական ստուգումներ մարզի մի շարք համայնքներում՝ Ջրառատ, Ջանֆիդա, Հացիկ, Ամասիա, Նալբանդյան և Նոր Արմավիր:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010թ. հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» N 186-Ն հրամանի դրույթների՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվել մարզի Տանձուտ, Գայ, Ակնաշեն և Արտիմետ համայնքների կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման առաջարկությունները: Ստացված 3 եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին (Արտիմետն ընթացքի մեջ է) գյուղական համայնքների կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման առաջարկությունները: Ստացված համապատասխան եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին:

Առողջապահության բնագավառ

Մարզի առողջապահական համակարգում գործում է 58 բուժհաստատություն, որից 52-ը՝ համայնքային և 6-ը՝ մարզպետարանի ենթակայության: Առողջապահության համակարգում աշխատում է 390 բժիշկ, միջին բուժանձնակազմի թիվը 835 է, այլ անձնակազմ՝ 520: Մեկ բժիշկը սպասարկում է 671 բնակչի (տարվա ընթացքում հիվանդ բժիշկ տարեկան 10000 բնակչի հաշվով կազմում է՝ 14,9 բժիշկ): Մեկ բնակչին պետության կողմից բուժսպասարկման համար 2018թ. նախատեսվել է 10619 դրամ: Մարզի բուժհաստատությունների մահճակալների թիվը 389-ն է:

Պետական առողջապահական ծրագրերի իրականացման նպատակով 2018թ. մարզի առողջապահական հաստատություններին հատկացված տարեկան գլոբալ բյուջեն կազմել է 2,822,622.7 հազ. դրամ, հոկտեմբերի 17-ին ճշտված պայմանագրային բյուջեն կազմել է 288,228.5 հազ. դրամ:

Մարզպետարանի ենթակայության 5 բժշկական հաստատությունների գլոբալ բյուջեն կազմում է 1,975,113.7 հազ. դրամ: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի բուժհաստատությունների վճարովի ծառայությունները կազմել են 413,995.1 հազ. դրամ, 2017թ. նույն ժամանակահատվածում վճարովի ծառայությունները կազմել են 334,794.5 հազ. դրամ կամ ավելացել է 79200.6 հազ. դրամով:

Արմավիրի և Վաղարշապատի պոլիկլինիկաների կողմից 2018թ. ընթացքում հետազոտության նպատակով Երևան են ուղարկվել 1737 զորակոչիկներ, վճարվել է 1,296.4 հազ. դրամ ճանապարհածախս:

Մարզում շտապ օգնության կանչերն իրականացվում են 6 բրիգադաների շնորհիվ՝ 14 շտապ օգնության մեքենաների միջոցով: Արմավիրի մարզին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից որպես նվիրատվություն տրամադրվել են 9 շտապ օգնության մեքենաներ, 2-ը ռեանիմոբիլներ, 7-ը գծային շտապ օգնության մեքենաներ և դրանց օժանդակ սարքավորումներ, որոնք դեռևս չեն շահագործվում ձևակերպման գործընթացի և մեքենաների մարզում աշխատելու ձևափոխությունների հետ կապված: «Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ին տրամադրվել է 4 մեքենա, որից 1-ը ռեանիմոբիլ, 3-ը գծային մեքենա, «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ-ին՝ 3 մեքենա, որից 1-ը ռեանիմոբիլ, 2-ը գծային մեքենա, «Մեծամոր ԲԿ» ՓԲԸ-ին և Քևորք և Անիթա Փակումեանների հիշատակի «Հիսուսի մանուկներ ԱԿ» ՓԲԸ-ին՝ մեկական գծային շտապ օգնության մեքենաներ: Մարզպետարանի ենթակայությամբ գործող բուժհաստատություններում 2018թ. ընթացքում իրականացվել է 31205 կանչ:

2018թ. ընթացքում մարզում ծնվել են 1202 երեխաներ, գրանցվել է 0-18 տարեկան երեխաների մահվան 15 դեպք, որից 0-1 տարեկան՝ 6 դեպք: Ընդհանուր մահացությունը 1214 է, որից 187-ը՝ մարզի հիվանդանոցներում: Մայրական մահացության դեպք չի գրանցվել:

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի կողմից 2018թ. ընթացքում ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի N 318-Ն որոշման ցանկում չընդգրկված ազգաբնակչությանը տրամադրվել է 130 ուղեգիր, որը տրամադրվում է ՀՀ առողջապահության նախարարի 2018թ. փետրվարի 23-ի N 486-Ա հրամանով հաստատված մարզին հատկացված 2018թ. քվոտաների քանակին համապատասխան:

Հաշմանդամներին, զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամներին հաշվետու ժամանակահատվածում առողջարանային վերականգնողական բուժման համար տրամադրվել է 41 ուղեգիր, որից Գանձաղբյուր՝ 22, Վանաձոր՝ 5, Արարատ մանկական առողջարան՝ 14: Դիլիջանի մանկական հակատուբերկուլյոզային առողջարանի ուղեգրեր են հատկացվել մարզի տուբերկուլյոզով հիվանդ ունեցող ընտանիքների կոնտակտավոր մինչև 18 տարեկան 85 երեխաների:

2018թ. ընթացքում կենտրոնական գնմամբ և մարդասիրական ճանապարհով տարբեր հիվանդությունների բուժման նպատակով ստացվել և մարզի բուժհաստատություններին է բաշխվել 227112.74 հազ. դրամ արժողությամբ տարբեր դեղամիջոցներ, որից 121919.916 հազ. դրամ արժողությամբ հակադիաբետիկ դեղամիջոցներ:

Մարզպետարանի ենթակայության առողջապահական հիմնարկներից ոչ մեկն աշխատավարձի պարտք չունի:

ՀՀ կառավարության 2016թ. մարտի 17-ի N 10 արձանագրային որոշմամբ հաստատված «2016-2020 թվականների իմունականխարգելման ազգային ծրագրի» շրջանակներում 2018 թվականին Արմավիրի մարզում իրականացվել են կանխարգելիչ պատվաստումներ՝ 2018թ. նպատակային քանակակազմերի շրջանում ընդգրկվածությունը պատվաստումներում կազմել է 1 տարեկան երեխաների շրջանում 94,7%, 2 տարեկան՝ 95,9%, 6 տարեկան՝ 97,6%:

Սոցիալական ապահովության բնագավառ

Մարզում բնակվում են 39352 կենսաթոշակառուներ, 405 զոհված ազատամարտիկների և 41 անհայտ կորած անձանց ընտանիքներ, 1062 փախստական ընտանիքներ, որոնց հիմնական մասը ստացել է ՀՀ քաղաքացիություն:

2018թ. ընթացքում կազմակերպվել և իրականացվել են մարզի երեք ՍԱՏԳ-ներում ընտանիքների անապահովության գնահատման համակարգով հաշվառված ընտանիքների փաստագրման աշխատանքները: 2018թ. հունվարի 1-ի դրությամբ փաստագրված ընտանիքների թիվը 6547 է, որոնցից նպաստառու են 4400-ը:

h/h	Բովանդակություն	Ընտանիքների թիվը ըստ ՍԱՏԳ-ների			Ընդամենը
		Արմավիր	Վաղարշապատ	Բաղրամյան	
1	ընդամենը փաստագրված	2411	3360	776	6547
2	ընտանեկան նպաստ ստացող	1669	2192	539	4400
3	սոցիալական նպաստ ստացող	436	578	106	1120
4	հրատապ դրամական օգնություն ստացող	478	627	148	1253
5	ավանդի փոխհատուցման գումար ստացած	128	120	21	269

ՀՀ Արմավիրի «Մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 2018թ. ընթացքում դրամական օգնություն է հատկացվել սոցիալապես անապահով 756 ընտանիքների՝ 26925.0 հազ. դրամ գումարի չափով:

2018թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառված են աշխատանք փնտրող 6832 մարդ, որոնցից գործազուրկի կարգավիճակ են ստացել 5905-ը: Գործակալություններում հաշվառված աշխատանք փնտրող անձանցից աշխատանքի են տեղավորվել 323 մարդ:

h/h	Բովանդակություն	Ընտանիքների թիվը ըստ ՍԱՏԳ-ների			Ընդամենը
		Արմավիր	Վաղարշապատ	Բաղրամյան	
1	Աշխատանք փնտրողներ	3946	1963	1610	7519
1.1	որից գործազուրկի կարգավիճակ ունեցող	3114	1469	1255	5838
1.2	որից աշխատանքի են տեղավորվել	421	206	123	750

Արմավիրի մարզային սոցիալական ապահովագրության տարածքային կենտրոններում հաշվառված են 39352 կենսաթոշակառուներ, այդ թվում՝ ըստ տարածքների.

Արմավիրի ՏԿ - 17176 մարդ
Վաղարշապատի ՏԿ - 19803 մարդ
Բաղրամյանի ՏԿ - 2373 մարդ:

ՀՀ կառավարության 09.06.2005թ. N 947-Ն որոշմամբ հաստատված «Զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների/ազատամարտիկների կարիքավոր ընտանիքներին բնակարանային հաշվառման վերցնելու և բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու» կարգի համաձայն՝ Արմավիրի մարզպետարանում հաշվառված է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող Արցախյան պատերազմում զոհված 33 և հաշմանդամ դարձած 105 զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիք: ՀՀ կառավարության 10.08.2017թ. «ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը հաստատելու և հաշվառման վերցնելու և ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 947-Ն որոշման մեջ լրացում կատարելուս մասին» N 1016-Ն որոշման համաձայն՝ մարտ ամսին 2-րդ կարգի անօթևան 20 հաշմանդամների և 1 զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքների բնակարանային գործ ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ քննարկման:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ

Մարզի հանրակրթական և հատուկ /օժանդակ/ դպրոցներից պարբերաբար ստացվել են տեղեկություններ պարտադիր ուսուցումից դուրս մնացած 25 աշակերտների մասին, ձեռնարկվել հնարավոր բոլոր միջոցները նրանց դպրոցներ ինտեգրելու համար: Կատարվել են այցելություններ մարզի տարբեր հանրակրթական և հատուկ (օժանդակ) դպրոցներ՝ հատուկ ուշադրություն հրավիրելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնդիրներին: Վկայագրվել է թվով 585 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, որոնք ընդգրկվել են մարզի ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում՝ իրենց կարիքներին համապատասխան կրթական ծրագրերում: Կազմակերպվել և անցկացվել են սեմինարներ մարզում կանանց և երեխաների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունից ստացվել է վարչության ենթակա ՆԳ բաժինների ԱԳԲ-ում հաշվառման մեջ գտնվող և փաստացիորեն հայտնի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործության կատարման մեջ մեղադրվող, ինչպես նաև ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արմավիրի բաժանմունքից անչափահաս երեխաների վերաբերյալ տեղեկատվություն՝ նրանց շրջանում համապատասխան աշխատանքներ կատարելու նպատակով: Իրականացված աշխատանքների արդյունքում 13 անչափահասներ դուրս են եկել հաշվառումից, 29 անչափահասների նկատմամբ նշանակվել են հասարակական դաստիարակներ, 5 անչափահասներ հաշվառված են պրոբացիայի պետական ծառայությունում:

Կատարվել են տուն-այցեր ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ենթակա բաժինների ԱԳԲ-ներում հաշվառման վերցված անչափահասների ընտանիքներ՝ նրանց կյանքի պայմանների, դրսևորած վարքագծի, ինչպես նաև ընտանիքների ուսումնասիրման նպատակով:

Բաժին է ներկայացվել սկզբնական հաշվառման վերցված առանց ծնողական խնամքի մնացած թվով 3 երեխաների անձնական գործեր, ովքեր վերցվել են տարածքային հաշվառման:

ՀՀ տարածքում բնակվող ՀՀ 11 քաղաքացիներ վերցվել են հաշվառման որպես որդեգրել ցանկացող անձինք և 1 երեխա վերցվել է հաշվառման որպես որդեգրման ենթակա երեխա, որոնցից 1 ընտանիք որդեդրել է իր ընտրած երեխային:

Խնամատար ընտանիքում տեղավորված 2 երեխաների ընտանիքների նկատմամբ իրականացվել է մշտադիտարկում և նրանց հետ կնքված պայմանագրերը երկարացվել են: Կատարված հետևողական աշխատանքների շնորհիվ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն երեխաներ չեն ուղղորդվել: Մանկատուն է տեղավորվել 2 երեխա, ընտանիք է վերադարձվել 4 երեխա:

Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Հայաստանի չորս մարզերում սննդային աջակցություն» ծրագրի շրջանակներում սեպտեմբեր ամսից շուրջ 80 միայնակ, հաշմանդամություն ունեցող կենսաթոշակառուներ, անապահով ընտանիքներ և ծանր սոցիալական կացության մեջ հայտնված քաղաքացիներ օգտվում են տաք սնունդ ծրագրից:

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքների 50 երեխա օգտվել են դպրոցական ծրագրից, 36 երեխա ստացել է տաք հագուստ և 300 ընտանիք՝ սննդային փաթեթներ:

Կրթության բնագավառ

2018թ. մարզում գործել է 120 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում՝

- ***մարզպետարանի ենթակայության 111 հանրակրթական դպրոց, որից՝***
  91-ը՝ միջնակարգ, 20-ը՝ հիմնական
- ***ԿԳ նախարարության ենթակայության 7 հանրակրթական ուսումնական հաստատություն, որից՝***

6 ավագ դպրոց, 1 ռազմամարզական վարժարան

2 ***ոչ պետական ուսումնական հաստատություն, որից՝***

1 ոչ պետական միջնակարգ դպրոց (Էոռնեկյանի անվան)

1 ոչ պետական կրթահամալիր («Գրիգոր Լուսավորիչ»)

Ընդհանուր առմամբ՝ քաղաքային 28 և գյուղական՝ 95 դպրոցներ

ԿԳ նախարարության ենթակայության միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ՝

- 5 պետական քոլեջ, 1 արհեստագործական ուսումնարան

Հանրակրթություն

- 2018-2019 ուսումնական տարում աշակերտների թիվը՝ 33340, սովորողները կոմպլեկտավորվել են 1618 դասարաններում:
- Մարզային ենթակայության 111 դպրոցում աշխատում է 3656 ուսուցիչ, որոնցից 3314-ն ունի բարձրագույն մանկավարժական կամ բարձրագույն կրթություն:
- Մարզի 35 ուսուցիչներ ստացել են տարակարգ:
- Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմել է 17,5 դասաժամ: Միջին դրույքաչափը /22 դասաժամ/ մարզում կազմել է 122.5 հազ. դրամ:
- Աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը կազմել է 1/9.4, իսկ դասարանի միջին խտությունը՝ 20.2 աշակերտ:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. հունիսի 22-ի N 609-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգի» համաձայն՝ ստացվել և մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներին է բաշխվել

690 միջնակարգ կրթության սովորական նմուշի ատեստատ, 2585 հատ սովորական նմուշի և 82 հատ հատուկ՝ գերազանցության նմուշի հիմնական ընդհանուր նմուշի վկայականներ, վերականգնվել են քաղաքացիների կորած և խոտանված դպրոցական ավարտական փաստաթղթերը:

Պետական միասնական և ավարտական քննությունների ավարտից հետո կազմակերպվել է նշված փաստաթղթերի բաշխումը մարզի հանրակրթական դպրոցներին:

- 2017-2018 ուստարում ներառական կրթություն են իրականացրել մարզի 52 հանրակրթական դպրոցներ՝ 1428 վկայագրված աշակերտների համար:
- 2018-2019 ուսումնական տարվա սեպտեմբեր ամսից ներառական կրթություն է կազմակերպվել մարզի 58 դպրոցներում: Ծրագրում ընդգրկվել է նոր մեթոդաբանությամբ (ձայնի և խոսքի, լսողական, տեսողական, ինտելեկտուալ (մտավոր), շարժողական միջին, ծանր և խորը ֆունկցիոնալ խանգարումներ) գնահատված 248 երեխա: Նշված դպրոցներում ընդգրկվել են նաև մարզի հատուկ (օժանդակ) դպրոցների աշակերտները:
- 2018-2019 ուսումնական Արմավիրի մարզում ներդրվեց համընդհանուր ներառական կրթության համակարգը՝ համաձայն ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 18-ի N 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի»:

ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 21-ի N 701-Ա որոշմամբ «Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանել է «Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, իսկ ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 21-ի N698-Ա որոշմամբ «Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 15 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանել է «Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի:

Նախապատրաստվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված կարգի հիման վրա Արմավիրի մարզպետի 2010թ. հուլիսի 8-ի N 238 որոշմամբ ստեղծված դպրոցների կառավարման խորհուրդների կազմերում առաջարկված փոփոխությունների կատարումը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն են ներկայացվել մարզի ուսումնական հաստատությունների 2018-2020 ուսումնական տարիների նախնական կոմպլեկտավորումները:

Կազմակերպվել են մարզի մարզային ենթակայություն ուսումնական հաստատությունների 2019-2021թթ. ՀՀ պետական բյուջի միջոցների հաշվին Արմավիրի մարզի կրթության ոլորտում կատարվելիք ծախսային ծրագրերի վերաբերյալ առաջարկների նախագծերի կազմման և դրանց ներկայացման աշխատանքները:

Իրականացվել է դպրոցների կողմից «Dasaran» կրթական ծրագրի էլեկտրոնային մատյանները վարելու գործընթացի արդյունավետության վերահսկողությունը:

Ձևավորվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել Արմավիրի մարզի 2018-2019 ուսումնական տարվա 1-12-րդ դասարանների դասագրքերի պատվերի հայտը: Կազմակերպվել է Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցների ըստ առարկաների դասագրքերի պահանջարկի ուսումնասիրությունը, որն ամփոփվել և ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն և դասագրքերի շրջանառու հիմնադրամ: 2018թ. օգոստոս ամսվա ընթացքում մարզի հանրակրթական դպրոցներին է բաշխվել 70478 դասագիրք:

ՀՀ Արմավիրի մարզպետի կագադրություններով ընդունման-հանձնման աշխատանքներ են իրականացվել Փարաքարի, Քարակերտի N 1, Արգավանդի, Շահումյանի, Բաղրամյանի, Արագածի, Աղավնատան, Պտղունքի, Դաշտի, Ծիածանի, Հուշակերտի և Հայթաղի միջնակարգ դպրոցներում:

Կազմակերպվել է մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ և 12-րդ դասարանների աշակերտների թվերի՝ ըստ տարածաշրջանների, դպրոցների, առարկաների, հավաքման և «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ներկայացման աշխատանքները: Աջակցություն է ցուցաբերվել «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մի շարք դպրոցների 10-րդ դասարաններում օտար լեզուներ և հայագիտական առարկաներից արտաքին ընթացիկ գնահատում իրականացնելուն:

ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի N1391-Ն որոշման պահանջներին համապատասխան հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման 2018թ. գործընթացը կազմակերպելու նպատակով կատարվել են նախապատրաստական աշխատանքներ՝ կազմվել են ատեստավորման ներկայացվող ուսուցիչների վերապատրաստման ցուցակները, համապատասխան փաստաթղթերի փաթեթները: 2018թ. ընթացքում ատեստավորվել է 558 ուսուցիչ:

Կազմակերպվել է դպրոցների վերաբերյալ տարածքային զինկոմիսարիատներին անհրաժեշտ տեղեկատվության ներկայացման աշխատանքները և «Ռազմագիտություն» առարկայի դասավանդման բարելավմանն ուղղված մարզպետարանի ու զինկոմիսարիատների համատեղ տարեկան միջոցառումների պլանների կազմումը:

Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ կողմից մարզի Արգինա, Շենիկ, Բաղրամյան, Ալաշկերտ, Հայկավան, Արմավիր, Արշալույս, Հայթաղ և Ֆերիկ համայնքերի դպրոցներում սեյսմիկ պաշտպանության վարքականոնների վերաբերյալ դասախոսությունների կազմակերպմանն ու անցկացմանը:

ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 05.12.2015թ. N 1354-Ն հրամանով հաստատված կարգերին համապատասխան անցկացվել են «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթների մարզային փուլերը: Հաղթողներն են ճանաչվել Լիաննա Նավասարդյանը՝ Հովտամեջի միջնակարգ դպրոցի անգլերեն լեզվի ուսուցիչ, Մաշա Իվանյանը՝ Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոցի տնօրեն, Վիկտորյա Ստեփանյանը՝ Մեծամոր քաղաքային համայնքի N 3 մանկապարտեզի դաստիարակ:

Մարզպետի 01.02.2018թ. N 14 որոշման համաձայն ստեղծվել են Արմավիրի մարզի 2017-2018 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերի կազմկոմիտեներ, առարկայական հանձնաժողովներ, ինչպես նաև հաստատվել են օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցերը:

2018թ. փետրվարի 3-18-ը Արմավիրի թիվ 8, Վաղարշապատի թիվ 3 հիմնական և Մյասնիկյանի միջնակարգ դպրոցներում անցկացվել է դպրոցականների 2017-2018 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների տարածքային փուլը: 16 առարկաներից իրենց գիտելիքները փորձել են 2017թ. դեկտեմբեր ամսին տեղի ունեցած օլիմպիադայի դպրոցական փուլում հաղթող ճանաչված աշակերտները:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված կարգի համաձայն՝ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, ինֆորմատիկա, աստղագիտություն և աշխարհագրություն առարկաների հայտագրումը կատարվել է օնլայն տարբերակով: Նշված 7 առարկաներից դպրոցականների օլիմպիադայի օնլայն տարբերակին Արմավիրի մարզից մասնակցել է 4616 աշակերտ:

Հայոց լեզու, ռուսաց լեզու, օտար լեզուներ, պատմություն, հայ գրականություն, հայոց եկեղեցու պատմություն և ՆԶՊ առարկաներից տարածքային փուլին մասնակցել է 780 աշակերտ: Տարածքային

փուլը հաղթահարած 120 դպրոցի 780 աշակերտ մարզային հանձնաժողովի կողմից հնարավորություն է ստացել մասնակցելու օլիմպիադայի մարզային փուլին: Մարզային փուլի արդյունքներն ամփոփվել են առարկայական հանձնաժողովների կողմից, որի արդյունքում 92 աշակերտ երաշխավորվել է մասնակցելու դպրոցականների 2018թ. առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին: Նրանցից 20-ը պարգևատրվել են տարբեր կարգի դիպլոմներով և գովասանագրերով:

Համագործակցելով Հայաստանի Շախմատի ակադեմիայի հետ կազմակերպվել է «Շախմատ» առարկան դասավանդող ուսուցիչների 2018թ. վերապատրաստումը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներն ունեն շախմատի բարեկարգ և կահավորված դասասենյակներ:

Ի կատարումն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի՝ մարզպետարանի աջակցությամբ անցկացվել է ՀՀ դպրոցականների 2017-2018 ուստարվա շախմատի օլիմպիադան:

Մարզի դպրոցները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել և հաջողությունների հասել «Ռուսական արջուկ, լեզվաբանություն բոլորի համար», «Մեղու», «Կենգուրու» մաթեմատիկական միջազգային մրցույթներում:

ՀՀ կառավարության 25.08.1999թ. N 532 որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետի և հանրակրթական, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի 11-րդ դասարանի ծրագրի համաձայն՝ 2018թ. ապրիլի 26-28-ը մարզի հանրակրթական դպրոցների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 655 պատանիների և աղջիկների մասնակցությամբ ուսումնական հաստատություններին կցված զորամասերում անցկացվել են 1-օրյա ռազմադաշտային պարապմունքներ: ՀՀ կրթության և գիտության ու պաշտպանության նախարարությունների համատեղ նախաձեռնությամբ ՆԶՊ առարկայի դասավանդման, ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքերի արդյունավետության, ինչպես նաև զինվորականի մասնագիտության նկատմամբ հետաքրքրության բարձրացման և ՆԶՊ առարկայից ստացած գիտելիքները գործնական ճանապարհով ամրապնդելու նպատակով 2017-2018 ուսումնական տարում կազմակերպվել և իրականացվել են «Կորյուն» ռազմամարզական խաղերը: Մարզում 2017թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում անցկացվել են խաղերի դպրոցական և տարածքային փուլերը: 2018թ. փետրվարի 21-ին N 60925 զորամասի տարածքում անցկացվեց «Կորյուն» ռազմամարզական խաղերի մարզային փուլը, որտեղ հաղթող ճանաչված Արմավիրի մարզի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոցի թիմը մասնակցեց հանրապետական եզրափակիչ փուլին:

Կազմակերպվել է հանրակրթական դպրոցների ավագ դասարանների աշակերտների և զինղեկների հանդիպումը ՀՀ պաշտպանության նախարարության սպաների հետ՝ ռազմամասնագիտական կողմնորոշման նպատակով:

Մարզի դպրոցներում նշվել է Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օրը, կազմակերպվել են մի շարք միջոցառումներ:

Մարզի հանրակրթական դպրոցներում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, փառատոներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, մրցաշարեր, առաջնություններ՝ նվիրված պետական, ազգային և այլ տոներին, ազգային ավանդական ծեսերին ու ավանդույթներին, նշանավոր մարդկանց, իրադարձությունների հոբելյաններին ու տարելիցներին, անցկացվել են հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, ցերեկույթներ, գրքի շնորհանդեսներ, քննարկումներ, կինոդիտումներ, պոեզիայի ժամեր, տիկնիկային ներկայացումներ:

Մարզի հանրակրթական դպրոցներում կազմակերպվել են Ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումներ: 2018թ. նախատեսված և անցկացվող միջոցառումների ծրագիրը ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Կազմակերպվել են Սարդարապատի հերոսամարտի 100-ամյակին նվիրված միջոցառումներ, բոլոր դպրոցները կազմել են համադպրոցական միջոցառումների ծրագրեր և իրականացրել սահմանված ժամկետներում:

Ապահովվել է մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների շարժի հաշվառումը՝ ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարի 24.11.2010 N 1640-Ն և 18.08.2011թ. N 861-Ն հրամաններով սահմանված կարգերի: Արտերկրից մարզի դպրոցներ են ընդունվել 371, իսկ այլ մարզերից՝ 91 աշակերտներ:

Արմավիրի մարզում գործում է 64 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային հզորությունը կազմում է 5330 երեխա/տեղ, շահագործվում է նշված հզորության 89%-ը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են 181 խմբով, որտեղ ընդգրկվել է 4975 երեխա, 5-6 տարեկանների թիվը՝ 1795: Երեխա/դաստիարակ հարաբերակցությունը կազմել է 1/14:

Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառ

ՀՀ Արմավիրի մարզում առկա է.

- 85 մշակույթի տուն,
- 76 գրադարան, որոնցից 1-ը ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության, 3-ը՝ քաղաքային, 72-ը՝ գյուղական: Գրադարանային ֆոնդը կազմում է 1163000 կտոր գիրք:
- 8 թանգարան,
- մարզի 16 համայնքներում գործում է 20 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոց,
- 1 արվեստի քոլեջ,
- Մարզի թվով 16 երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային նվագարանների բաժիններում սովորող 163 աշակերտների ուսման վարձավճարի փոխհատուցման համար նախատեսված գումարը 2018թ. համար կազմել է 38039.8 հազ. դրամ:
- ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Արմավիրի մարզի պետական ցուցակը ներառում է 416 հուշարձան, որոնք տեղաբաշխված են մարզի 58 համայնքներում և որոնց պահպանության և օգտագործման ուղղությամբ կատարվել են ՀՀ օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված լիազորություններն ու գործառույթները:
- Արմավիրի մարզում մշակույթի բնագավառում պետական և մարզային միջոցառումների ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև տարբեր մշակութային, կրթական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, փառատոներ, ցուցահանդեսներ, մրցույթներ՝ նվիրված պետական, ազգային և այլ տոներին, ազգային ավանդական ծեսերին ու ավանդույթներին, նշանավոր մարդկանց, իրադարձությունների հոբելյաններին ու տարելիցներին, անցկացվել են հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, ցերեկույթներ, գրքերի շնորհանդեսներ, քննարկումներ, կինոդիտումներ, պոեզիայի ժամեր, տիկնիկային ներկայացումներ, տարբեր թեմաների և գիտության տարբեր բնագավառներին նվիրված զրույցներ, այդ թվում՝
- Հունվարի 27-ին մարզկենտրոնում կազմակերպվեց Հայոց բանակի օրվան և «Սուրբ Սարգիս» ավանդական տոնին նվիրված տոնակատարություն, որի ընթացքում Արմավիրի մարզպետի կողմից պարգևատրվեցին Հայոց բանակում ծառայություն անցած և զորացրված ժամկետային զինծառայողներ, արցախյան ազատամարտի մասնակիցներ: Տոնին նվիրված միջոցառումներ

կազմակերպվեցին մարզի քաղաքային և գյուղական համայնքներում, ծաղիկներ խոնարհվեցին զոհված զինծառայողների հիշատակին: Միջոցառումները կազմակերպվեցին մարզի երիտասարդական կազմակերպությունների, միությունների և ուսումնական հաստատությունների ուսանողների մասնակցությամբ մոտ 500 երիտասարդների բաժանվեցին աղի բլիթներ:

- Մարզում փետրվարի 19-ին նշվեց «Մայրենի լեզվի օրը», դպրոցներում կազմակերպվել են միջոցառումներ, մայրենիին նվիրված բաց դասեր, շարադրությունների մրցույթներ:
- Արմավիրի մարզային գրադարանում և մարզի համայնքային գրադարաններում և ուսումնական հասատատություններում կազմակերպվեց «Գիրք նվիրելու օր»: Հայաստանի գրողների կողմից մարզին հատկացված, ինչպես նաև առանձին բանաստեղծներ իրենց գրքերի օրինակներից նվիրեցին մարզի գրադարաններին:
- ՀՀ կառավարության 2008թ. հուլիսի 3-ի N 701-Ն որոշմանը համապատասխան հանրապետության երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների մեթոդական աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ մշակույթի նախարարության ծրագրով փետրվար ամսից սկսվել է մարզում վարպետության դասերի կազմակերպումը նշված դպրոցների սաների հետ, այդ թվում՝ ուսումնա-մեթոդական և գործնական օգնություն, վերապատրաստման դասընթացներ՝ դասավանդող ուսուցիչների համար, որոնք վարում են Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, գեղարվեստի և պարարվեստի քոլեջների լավագույն դասախոսներ:
- Նշված ծրագրով անցկացվում են նաև երաժշտատեսական առարկաների «Սոլֆեջո» առարկայի թելադրություն, «Երաժշտական գրականություն» առարկայի վիկտորինա, ստեղծագործական բաժինների սաների լսումներ, համատեղ համերգներ, ինչպես նաև կիրառական բաժինների սաների մասնակցությամբ թեմատիկ ցուցահանդես-ակցիա:
- Մարտ ամսվա ընթացքում մարզային գրադարանում կազմակերպվեցին Հ.Թումանյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառումներ, այդ թվում՝ գրքերի նվիրատվություն, դասախոսություններ, հեքիաթների բեմադրություններ: «Թումանյանական շաբաթ» կազմակերպվեց մարզի գրադարաններում, մշակույթի տներում և հանրակրթական դպրոցներում:
- Մարտի 13-ին մարզի գրադարաններում, հանրակրթական դպրոցներում կազմակերպվեցին միջոցառումներ՝ նվիրված Եղիշե Չարենցի ծննդյան օրվան:
- Մարտի 21-ին մարզի գրադարաններում, հանրակրթական դպրոցներում կազմակերպվեցին պոեզիայի միջազգային օրվան նվիրված միջոցառումներ:
- Մարտի 25-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հետ համագործակցությամբ կազմակերպվեցին «Ծաղկազարդ» տոնին նվիրված միջոցառումներ՝ Արմավիր, Էջմիածին և Մեծամոր քաղաքների նախադպրոցական ուսումնական հաստատությունների սաների մասնակցությամբ:
- Մարտի 29-ին ասմունքի հանրապետական մանկապատանեկան փառատոնի Արմավիրի մարզային փուլի հաղթողները մասնակցեցին Երևան քաղաքում կայացած հանրապետական եզրափակիչ փուլին և գալա համերգին:
- Ապրիլի 3-ին մարզպետարանի նիստերի դահլիճում տրվեց «Մանկական գրքի շաբաթ» հանրապետական միջոցառման մեկնարկը Հայաստանի գրողների միության նախագահի և հանրահայտ հայ մանկագիրների մասնակցությամբ:
- Մայիսի 5-ին ՀՀ-ում Չեխիայի դեսպանատան հետ համատեղ կազմակերպվեց չեխական «Բավականին մեծ թատրոն»-ի հյուրախաղը Արմավիրի մարզում:
- Մարզպետարանի կողմից նախապատրաստական աշխատանքներ են տարվել Հայաստանի առաջին հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-այմակին նվիրված տոնական միջոցառումների կազմակերպման ուղղությամբ: Մարզի համայնքները և ուսումնական,

գեղարվեստական կրթություն իրականացնող և մշակութային հաստատությունները կազմել են նշված տոներին նվիրված՝ իրենց միջոցառումների ծրագիրը, որի կատարման վերաբերյալ մարզպետարան են ներկայացնում եռամսյակային հաշվետվություններ: Մայիսի 28-ին կազմակերպվեց տոնական մեծ համերգ հանրապետության և մարզի լավագույն երգիչների, երաժիշտների և պարային համույթների մասնակցությամբ՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-այմակին:

- Հուլիսի 7-8-ին Արմավիրի մարզը առանձին տաղավարով ներկայացավ Գորիսում «ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրով կազմակերպված ցուցահանդեսին:
- Հուլիսի 26-ին Արմավիր քաղաքի հրապարակում կազմակերպվեց ազգագրական պարերի բացօթյա պարուսուցում մարզի պարային համույթների և դպրոցականների մասնակցությամբ:
- Օգոստոսի 18-ին կազմակերպվեց ՀՀ մշակույթի նախարարի այցը Արմավիրի մարզ:
- Սեպտեմբերի 6-ին Արմավիր քաղաքի մշակույթի տանը կազմակերպվեց գրող Արսեն Զաքարյանի «Ամենօրյա ղողանջներ» գրքի շնորհանդեսը:
- Սեպտեմբերի 9-ին Արմավիրի մարզի պատվիրակությունը մասնակցեց Դիլիջան քաղաքում անցկացվող «Մշակութային վերածնունդ» Արվեստների և արհեստների համահայկական փառատոնին:
- Սեպտեմբերի 21-ին մարզում մեծ շուքով նշվեց ՀՀ անկախության օրվան նվիրված տոնը, ինչպես նաև ապահովվեց մարզի պատվիրակության մասնակցությունը մայրաքաղաքի Հանրապետության հրապարակում կազմակերպված ցուցահանդեսին:
- Սեպտեմբեր ամսին Արմավիրի մարզպետարանի և Փշատավանի գյուղապետարանի կողմից աջակցություն է ցուցաբերվել Փշատավան համայնքում «1000 տարվա գյուղամեջ» ամենամյա գյուղական կենցաղավարության, արհեստագործության և արվեստի փառատոնի կազմակերպմանը:
- Հոկտեմբերի 7-12-ը Արմավիրի մարզը ներկայացավ Ֆրանկոֆոնիայի ավանի հայկական տաղավարում:
- Նոյեմբերի 5-12-ը Էջմիածին քաղաքում «Ռոլան Բիկով» հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվեց Վիշեգրադի ֆիլմերի օրերի անցկացման շաբաթ, որի շրջանակներում կինոդիտումներին մասնակցեցին շուրջ 2000 աշակերտներ:
- 2018թ. ընթացքում մարզի հանրակրթական դպրոցներում կազմակերպվել և անցկացվել են ՀՀ սփյուռքի նախարարության կողմից Հայաստան-Սփյուռք գործակցության պետական քաղաքականության շրջանակներում իրականացվող «Մեր մեծերը» ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումները՝ նվիրված Միքայել Արամյանցին, Վահրամ Փափազյանին, Հակոբ Պարոնյանին, Զաբել Եսայանին, Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիրներին ու հերոսներին:
- Կազմակերպվել են բաց դասեր, ցերեկույթներ, գրական երաժշտական միջոցառումներ, թեմատիկ քննարկումներ, գիտաժողովներ, բեմադրություններ, ասմունքի մրցույթ, ֆիլմի դիտում, ցուցահանդես, ձևավորվել են պատի թերթեր:
- Մարզի մշակույթի բնագավառների ներկայացուցիչները մասնակցել են հանրապետական և միջազգային մրցույթների ու առաջնությունների՝ արժանանալով մրցանակների ու խրախուսանքի:
- Աջակցություն է ցուցաբերվել մարզի տարածքում ավանդական տոների, ծեսերի, ուխտագնացությունների, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը:

Սպորտ և երիտասարդության հարցեր. Արմավիրի մարզը հանրապետության մարզական նվաճումներով աչքի ընկնող տարածաշրջաններից է: Մարզի մարզիկները պարբերաբար մասնակցում են տարբեր մարզաձևերից մեծահասակների, երիտասարդների և պատանիների աշխարհի, Եվրոպայի և միջազգային այլ առաջնություններին՝ մարզում հենակետային համարվող չորս

մարզաձևերից՝ ըմբշամարտ, ծանրամարտ, բռնցքամարտ, շախմատ և ունեն նշանակալի հաջողություններ ու ձեռքբերումներ՝ մեդալներ օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի և միջազգային առաջնություններում:

Մարզում պետական երիտասարդական քաղաքականությունն իրականացվում է պետական կառավարման մարմինների, ՏԻՄ-երի, բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների, երիտասարդության հարցերով զբաղվող ՀԿ-ների և այլ մարմինների կողմից:

Ոլորտի թույլ կողմերից է Արմավիր և Մեծամոր քաղաքներում, ինչպես նաև գյուղական բնակավայրերում մարզամշակութային և ժամանցի վայրերի բացակայությունը:

2018թ. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ մասսայական սպորտի ոլորտում մարզում իրականացվել են մի շարք ծրագրեր, մասնավորապես՝

- Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթի անցկացում,
- ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրակրթական դպրոցների 1-3-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում,
- ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 4-7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում,
- ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում,
- ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում,
- ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում,
- Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում,
- ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում,
- ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների սպարտակիադայի անցկացում,
- ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում,
- Տարեցների հանրապետական խաղերի անցկացում,
- ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ», «Լավագույն մարզական քաղաք», «Լավագույն մարզական գյուղ» հանրապետական ստուգատեսներ,
- Դպրոցականների շախմատի հանրապետական օլիմպիադա երեք փուլով,
- ՀՀ դպրոցականների շախմատի պատանիների և աղջիկների առաջնություն,
- «ՀՀ Ազգային ժողովի գավաթի» խաղարկություն երեք փուլով,
- Թեթև աթլետիկայի միջազգային ֆեդերացիայի օրացուցային պլանով նախատեսված՝ զոհված և անհայտ կորած ազատամարտիկների հիշատակին նվիրված կրոսավազքի առաջնություն,
- ՀՀ Անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 27-րդ մարզական խաղեր՝ 6 մարզաձևերից,

2018թ. պետական բյուջեով հատկացվել է 134.8 մլն դրամ Էջմիածին քաղաքի նոր մարզադպրոցի կառուցման նպատակով:

2018թ. ավարտվել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից իրականացվող Էջմիածնում ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցման և կահավորման, ինչպես նաև ընթացքի մեջ է Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցման աշխատանքները:

2018թ. հաշվետու ժամանակահատվածում մարզպետարանի կողմից անցկացվել են պետական ծրագրերով, ինչպես նաև մարզպետարանի աշխատանքային ծրագրով նախատեսված և այլ միջոցառումներ, առաջնություններ, մրցաշարեր, այդ թվում՝

- Հունվարի 9-17-ը մարզի 30 շախմատիստներ Երևանում մասնակցեցին Անդրանիկ Մարգարյանի հուշամրցաշարին:
- Փետրվարի 15-23-ը մարզում կազմակերպվել է շախմատի պատանիների և աղջիկների առաջնության մարզային փուլը՝ 5 տարիքային խմբերում: Մարզային փուլի հաղթողները Երևանում մասնակցեցին հանրապետական եզրափակիչ փուլին, որտեղ Վաղարշապատի N 12 հիմնական դպրոցի թիմը դարձավ հաղթող:
- Փետրվար-մարտ ամիսների ընթացքում մարզում կազմակերպվեց ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված՝ դպրոցականների հանրապետական 26-րդ մարզական խաղերի դպրոցական, համայնքային և տարածաշրջանային փուլերը՝ 6 մարզաձևերից, որոնց հաղթողները կմասնակցեն Արմավիր, Արթիկ և Գյումրի քաղաքներում անցկացվող փնջային մրցումներին:
- Հունվար-մարտ ամիսների ընթացքում կազմակերպվեցին և անցկացվեցին «ՀՀ Ազգային ժողովի գավաթի» խաղարկության դպրոցական, տարածքային փուլերը:
- «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից մարզի Ակնալիճ, Տանձուտ և Բամբակաշատ համայնքներում տեղադրվել են խաղահրապարակների սարքավորումներ (1508000-ական դրամի չափով):
- Մայիս ամսին վերանորոգվել է Զարթոնքի միջնակարգ դպրոցի մարզադահլիճը:
- Մայիսի 22-ին մասնավոր ներդրողի կողմից Արմավիր քաղաքում բացվեց «Օլիմպ» ֆիթնես ակումբը ժամանակակից մարզասարքերով:
- Օլիմպիական մարզաձևերից Արմավիրի մարզից մի շարք մարզիկներ մասնակցել են տարբեր միջազգային մրցաշարերի և ունեցել հաջողություններ:
- Հուլիս ամսին Իտալիայի Միլան քաղաքում կայացած ծանրամարտի Եվրոպայի պատանիների առաջնությունում Կարեն Մարգարյանը երկամարտում դարձավ չեմպիոն, իսկ Միլենա Խաչատրյանը՝ բրոնզե մեդալակիր:
- Հոկտեմբեր ամսին Արգենտինայի մայրաքաղաքում կայացած օլիմպիական խաղերում Կարեն Մարգարյանը դարձավ ծանրամարտի օլիմպիական չեմպիոն:
- Հոկտեմբեր ամսին Լեհաստանի Զամոսկ քաղաքում կայացած Եվրոպայի մինչև 23 տարեկանների ծանրամարտի առաջնությունում Անդրանիկ Կարապետյանը և Սիմոն Մարտիրոսյանը երկամարտում դարձան չեմպիոններ:
- Թուրքմենստանի մայրաքաղաքում կայացած ծանրամարտի աշխարհի առաջնությունում Սիմոն Մարտիրոսյանը դարձավ աշխարհի չեմպիոն:
- Հունգարիայի մայրաքաղաքում կայացած հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի առաջնությունում Արթուր Շահինյանը դարձավ բրոնզե մեդալակիր:

Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության բնագավառ

Զարգացման ծրագրեր. Կազմվել է ՀՀ Արմավիրի մարզպետի 2017թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվությունը, որը տեղադրվել է մարզպետարանի http://armavir.mtad.am պաշտոնական կայքում:

Մշակվել է ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունից բխող ՀՀ Արմավիրի մարզի 2018թ. գործունեության ծրագիրը: Ծրագրի նախագիծը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ներկայացվել մարզխորհրդի նիստում:

Ծրագիրն հավանության արժանացել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018թ. մայիսի 8-ի N 131-Ա հրամանով և տեղադրվել մարզպետարանի պաշտոնական կայքում:

2018թ. կազմվել և սահմանված ժամկետում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունից բխող 2018 թվականի գործունեության ծրագրի իրականացման առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակային մոնիտորինգային հաշվետվությունները (ընթացքի մեջ են տարեկան հաշվետվության կազմման աշխատանքները): Ներկայացվել են նաև մարզի 2018թ. մոնիտորինգային ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը՝ եռամսակային և տարեկան կտրվածքով:

2018թ. հունվարի 16-ին ՀՀ կառավարության նիստերի մեծ դահլիճում կայացած աշխատանքային հանդիպմանը մասնակցել են մարզպետարանի համապատասխան պատասխանատու աշխատակցները, ինչպես նաև խոշորացված ու խոշոր համայնքների տնտեսական զարգացման հարցերով պատասխանատուները, համայնքապետարանների ֆինանսիստները, որի ընթացքում ներկայացվել են.

1. ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 21-ի և դեկտեմբերի 28-ի նիստերում հավանության արժանացած համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի գնահատման ընթացակարգը,
2. ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 16-ի «ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման հավելվածում կատարված փոփոխությունները, որոնք կապված են 2018թ. ընթացքում ՀՀ 2018թ. պետական բյուջեով արդեն իսկ նախատեսված սուբվենցիաներից բացի այլ սուբվենցիաներ ստանալու առանձնահատկությունների հետ,
3. Միջազգային կառույցների կողմից իրականացվող ծրագրերը և դրանց շրջանակներում համայնքների հնարավորությունները,
4. Համայնքների տնտեսական պատասխանատուների վերապատրաստման դասընթացների նախնական պլանները (ծրագրի շրջանակներում 2018թ. ընթացքում Փարաքար համայնքի պատասխանատուն մեկնել է Հոլանդիա):

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում տեղի է ունեցել մարզի 5000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքներում տնտեսական զարգացման հարցերով պատասխանատուների հարազրույցի փուլը, որին մասնակցել են մարզի Մեծամոր քաղաքային և Քարակերտ գյուղական համայնքների ներկայացուցիչները:

Մարզային հանդիպումների շրջանակում 2018թ. փետրվարի 2-ին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալը մարզպետարանում հրավիրված խորհրդակցությանը հանդիպել է համայնքների ղեկավարների, մարզի տարածքային զարգացման և համայնքների զարգացման ծրագրերի պատասխանատուների, բանկերի, ՈւՎԿ-ների, ՓՄՁ ԶԱԿ-ի աշխատակիցների հետ, որի ընթացքում քննարկվել են համայնքների զարգացմանն ուղղված ծրագրերի ընթացակարգերին վերաբերող հարցեր: Ներկայացվել է ՀՀ կառաբարության 21.12.2017թ. N 53 արձանագրային որոշման համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի գնահատման ընթացակարգը և 2018թ. պետական բյուջեով արդեն իսկ նախատեսված սուբվենցիաներից բացի այլ սուբվենցիաներ տրամադրման նպատակով հայտերի գնահատման կարգը, ինչպես նաև համայնքային զարգացման ծրագրերի տարեկան աշխատանքային պլանների կազմմանը վերաբերող մանրամասներ: Ներկայացվել է նաև ՄԱԶԾ «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագիրը և առաջարկվել է համայնքը

զբոսաշրջային առումով գրավիչ դարձնելու առաջարկներ ներկայացնել՝ ծրագրին տրամադրելու նպատակով:

Համապատասխան շրջաբերական գրությամբ համայնքներին է տրամադրվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունից ստացված համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման «Մեթոդական ուղեցույցը» և առաջարկվել ուղեցույցին համապատասխան մշակել և մարզպետարան ներկայացնել ավագանու կողմից հաստատված համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլանը, որի ընթացքում ցուցաբերվել է մեթոդական աջակցություն: Արդյունքում, մարզի բոլոր համայնքների կողմից կազմված և ավագանու կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլանները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և տեղադրվել մարզպետարանի պաշտոնական կայքի «Համայնքներ» բաժնում՝ http://armavir.mtad.am:

Մշտական աշխատանքներ են տարվել համայնքապետարանների հետ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018թ. բյուջետային ֆինանսավորման հայտերի մշակման և սահմանված ժամկետում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնելու ուղղությամբ, համայնքներին է տրամադրվել սուբվենցիաների տրամադրման նպատակով հայտերի գնահատման նոր կարգը: 2018թ. ապրիլի 10-ին մարզպետի մոտ հրավիրվել է խորհրդակցություն մարզի 26 համայնքների ղեկավարների մասնակցությամբ, որտեղ քննարկվել են սուբվենցիայի հայտերի ներկայացմանը վերաբերող հարցեր:

2018թ. ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել 19 սուբվենցիայի հայտեր 16 համայնքների կողմից (Ջրարբի, Դալարիկ, Արագած, Եղեգնուտ, Փարաքար (3 հայտ), Քարակերտ (2 հայտ), Լուսագյուղ, Արգավանդ, Խորոնք, Սարդարապատ, Ակնալիճ, Արևաշատ, Հայկաշեն, ք.Արմավիր, ք.Մեծամոր, Աղավնատուն): Թվով 9 ծրագրային փաթեթներ հավանության են արժանացել ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի ընթացքում (Ջրարբի, Դալարիկ, Եղեգնուտ, Փարաքար, Լուսագյուղ, Արգավանդ, Ակնալիճ, Արագած, Հայկաշեն): 2018թ. ընթացքում ՀՀ կառավարության կողմից 7 ծրագրերի ֆինանսավորման համար հատկացվել է շուրջ 40,538.9 հազ. դրամ, մասնավորապես՝

1) Ջրարբի համայնքում ավարտվել են գործարար կենտրոնի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքները: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 12,772.8 հազ. դրամ, որից 5,109 հազ. դրամը հատկացվել է ՀՀ կառավարության որոշմամբ:

2) Դալարիկ համայնքում ավարտվել են Շահումյան փողոցի ասֆալտապատման աշխատանքները: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 10,200.0 հազ. դրամ, որից 3,519.0 հազ. դրամը հատկացվել է ՀՀ կառավարության որոշմամբ:

3) Լուսագյուղ համայնքում ավարտվել են կենտրոնական՝ Ն.Դարբինյան փողոցի հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 32,355.0 հազ. դրամ հազ. դրամ, որից 12,942.0 հազ. դրամը հատկացվել է ՀՀ կառավարության որոշմամբ:

4) Արգավանդ համայնքում ավարտվել են ոռոգման խորքային հորի վերականգնման և հոսանքագծի կառուցման աշխատանքները: Ծրագիրը, որի պայմանագրային արժեքը կազմել է 10,650.0հազ. դրամ, որից 5,932.0 հազ. դրամը հատկացվել է ՀՀ կառավարության որոշմամբ:

5) Ակնալիճ համայնքում ավարտվել են Շահումյանի անվան փողոցի և նրանից դեպի ավտոմայրուղի ընկած հատվածի բարեկարգման և ընդհանուր ասֆալտապատման աշխատանքները: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 16,200.0 հազ. դրամ, որից 6,480.0 հազ. դրամը հատկացվել է ՀՀ կառավարության որոշմամբ:

6) Արագած համայնքում ընթացքի մեջ են հանդիսությունների սրահի կահավորման համար գույքի և էլեկտրատեխնիկայի ձեռք բերման աշխատանքները: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 10,708.1 հազ. դրամ, որից 3,212.4 հազ. դրամը տրամադրվել է ՀՀ կառավարության որոշմամբ:

7) Հայկաշեն համայնքում ընթացքի մեջ են մանկապարտեզի կահավորման համար գույքի և էլեկտրատեխնիկայի ձեռքբերման աշխատանքները: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 8,484.6 հազ. դրամ, որից 3,344.4 հազ. դրամը տրամադրվել է ՀՀ կառավարության որոշմամբ:

2018թ. ընթացքում չեն իրականացվել հավանության արժանացած սուբվենցիայի երկու ծրագրեր.

- Փարաքար համայնքում կոյուղատար համակարգի և ոռոգման ցանցի գործարկում ծրագիրը՝ համանքում առկա մաքրման կայանի խնդրի պատճառով,
- Եղեգնուտ համայնքի ջրահամակարգի վերակառուցում և ջրաչափերի տեղադրում» ծրագիրը՝ ծրագրի մեկնարկը այս պահի դրությամբ տրված չէ, քանի որ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից դեկտեմբեր ամսին են կազմվել նախագծանախահաշվային փաստաթղթերը, և շինարարական աշխատանքները դեռևս սկսված չեն, ծրագիրը կիրականացվի 2019 թվականի ընթացքում:

02.10.2018թ. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել առաջարկություններ՝ 2019 թվականից սկսած սուբվենցիաների տրամադրման ընթացակարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

ՀՀ Արմավիրի մարզի համայնքապետարաններից հավաքագրվել են ըստ համայնքների և ներդրողների 2018թ. ագրոպարենային ոլորտում նոր ստեղծվող և ընդլայնվող կարողությունների կանխատեսումները՝ ըստ բնագավառների, ներդրման գումարի և նոր ստեղծվող աշխատատեղերի թվի և արդյունքները ներկայացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

Մարզի 5000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքներին տրամադրվել է «Տեղական տնտեսական զարգացման պլանի կառուցվածքի և բովանդակության» ուղեցույցը և առաջարկվել ձևաչափին համապատասխան կազմել համայնքի տեղական տնտեսական պլանը, որի առկայությունը համայնքի համար կստեղծի նոր հնարավորություններ դրամաշնորհների որոնման, նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ, արդյունքում, սահմանված ժամկետում համայնքապետարանների կողմից տեղական տնտեսական պլաններ չեն ներկայացվել, աշխատանքները կշարունակվեն 2019թ. ընթացքում:

Աջակցություն է ցուցաբերվել մարզի համայնքապետարաններին՝ համայնքների վարչական տվյալների շտեմարանի լրացման և պահանջվող փորձնական էլեկտրոնային ծրագրում վերջնական ճշտված տվյալների մուտքագրման ընթացքում: Արդյունքում, սահմանված ժամկետում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել մարզի բոլոր 97 համայնքների 2017թ. վարչական տվյալների շտեմարանները, որի առնչությամբ նախարարությունից անճշտությունների վերաբերյալ դիտողություններ չեն ստացվել:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել մարզի համայնքներում առաջնային լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ համապատասխան ձևաչափով հավաքագրված և ամփոփված տեղեկատվությունը:

ՀՀ Արմավիրի մարզպետի ամենօրյա ուշադրության կենտրոնում են մարզի ներդրողների և գործարար հատվածի հետ տարվող աշխատանքները, մասնավորապես՝ կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ, ճանաչողական այցելություններ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից աջակցություն է ցուցաբերվել ներդրումային ծրագրերի առաջարկների կազմման ընթացքում: Մարզպետարան են դիմել մի շարք գործարարներ՝ բամբակի մշակման, վերամշակման, գինու, ոչ ոգելի խմիչքների, պարարտանյութի և ախտահանիչների արտադրության, անասնապահության զարգացման,

ֆերմերային տնտեսության, կարի արտադրամասի հիմնման, կաթի վերամշակման արտադրամասի վերազինման, զբոսաշրջային համալիրի հիմնման, հանգստի գոտու տարածքում հյուրատների, լողավազանի և հայկական հացատան, մանկական զբոսայգու կառուցման, տուրիզմի և ձկնորսության զարգացման, զբոսաշրջության պոտենցիալի վերհանման և իրացման, գյուղական էկոդպրոցի հյուրատան կառուցման, ինովացիաների խթանման, դպրոցի սպորտդահլիճի վերանորոգման, սպանդանոցի կառուցման և այլ ծրագրային գաղափարներով:

Գործարար ծրագրերի էլեկտրոնային հարթակների ձևավորման նպատակով մարզպետարանում հավաքագրվել են երեք տասնակից ավելի ներդրումային ծրագրերի առաջարկներ, որոնցից 15-ը ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և տեղադրվել մարզպետարանի պաշտոնական կայքի «Ծրագրեր և գերակա խնդիրներ» բաժնում՝ http://armavir.mtad.am/investmentproject/:

2018թ. մարզպետարանը համագործակցել է ՓՄՁ ԶԱԿ Արմավիրի մասնաճյուղի հետ, աջակցություն է ցուցաբերվել միջոցառումների կազմակերպման ընթացքում, մասնավորապես՝ «Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության» ծրագրի շրջանակներում կազմակերպվող դասընթացներին մասնակցելու համար իրականացվել են շահառուների հավաքագրման աշխատանքներ:

ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի շահառու հանդիսացող և համապատասխան դասընթացներ անցած Արկադի Խաչիկյանը ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) ծրագրի կողմից գործուղվել է Ճապոնիա՝ FOODEX JAPAN 2018 ցուցահանդեսին իր արտադրանքը ներկայացնելու նպատակով (չրեր): Ձեռք են բերվել նոր գործարար կապեր և նախնական պայմանավորվածություն 20 տոննա չրի արտահանման վերաբերյալ:

2018 թվականի տարեկան գործունեության ծրագրով պլանավորված ծրագրերն ու միջոցառումները հիմնականում իրականացվել են, չեն իրականացվել հետևյալ խոշոր ծրագրերը.

- Արմավիր քաղաքում աղբի վերամշակման գործարանի կառուցում և ջերմոցային տնտեսության հիմնում /ծրագիրն իրականացնող հայ-չեխական «Գրինէկո-Կաս» ՍՊԸ-ի կողմից ներդրումների բացակայություն/ -17.8 մլրդ դրամ
- Արմավիր քաղաքի և 1 գյուղի ՋևՋ համակարգերի բարելավում, Մեծամորի կոյուղու մաքրման կայանի (ԿՄԿ) կառուցում -Համայնքային ենթակառուցվածքի ծրագիր (ՀԵՑ) II Փուլ3 /Գերմանական զարգացման բանկի (KFW) ֆինանսավորմամբ Ջրային կոմիտեի կողմից իրականացվող ծրագրի ֆինասնավորման բացակայություն/ -613 մլն դրամ
- մարզում սպանդանոցի կառուցում /մասնավոր ներդրումների բացակայություն/ -120 մլն դրամ

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել «Իմ քայլը հանուն Արմավիրի մարզի» կազմակերպվող ներդրումային համաժողովի հնարավոր մասնակից համարվող, իրենց գործունեությունը Հայաստանում կամ արտերկրում իրականացնող գործարարների ցուցակը՝ համապատասխան ձևաչափով:

«Իմ քայլը հանուն Արմավիրի մարզի» ներդրումային համաժողովը նախատեսվում է անցկացնել 2019 թվականի ապրիլի 12-ին ժամը 11:00-ին՝ «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ի դահլիճում: Նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներն ընթացքի մեջ են:

Զբոսաշրջություն. ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությամբ առաջնահերթ գերակայություն է սահմանվել տուրիզմի զարգացումը՝ շեշտը դնելով հոգևոր, մշակութային, գյուղական և ագրո տուրիզմի վրա:

2018թ. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել 8 ծրագրային գաղափար: Փաթեթը ներկայացվել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագրին:

2018թ. ՀՀ Արմավիրի մարզպետարանում ՄԱԿ-ի «Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում» ծրագրի համակարգողի հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվել են Արմավիրի մարզի զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրային հարցեր: Ծրագրի շրջանակներում ծրագրի փորձագետները մարզում նոր տուրիստական ծառայությունների բացահայտման նպատակով իրականացրել են տունայցեր տնական գինու արտադրությամբ զբաղվող գյուղական ընտանիքներ:

2018թ. ապրիլի 14-ին մարզպետարանի և տուրիզմի զարգացման հեռանկար ունեցող համայնքների ներկայացուցիչները մասնակցել են Հայաստանի ամերիկյան համալսարանում կայացած երրորդ ամենամյա համաժողովին:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտե է ներկայացվել մարզում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը:

03.11.2018թ. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզի երեք՝ Վաղարշապատ, Բագարան, Երվանդաշատ համայնքներում քայլարշավային տուրիզմին անհրաժեշտ ռեսուրսների առկայության վերաբերյալ՝ պահանջվող ձևաչափով:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից ստեղծվող ՀՀ տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակի շահագործման աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով, ներկայացվել են ՀՀ Արմավիրի մարզի արդյունաբերական, գյուղատնտեսական և զբոսաշրջային ներուժը արտահայտող լուսանկարներ և տեսանյութ (22 վայրկյան տևողությամբ):

Արտաքին կապեր

2018թ. մարզը շարունակել է համագործակցությունը նախկինում հաստատված կապերով՝ տնտեսության զարգացմանը նպաստող ներդրումային հնարավորությունների բացահայտման, մարզում հնարավոր ներդրողների ներգրավման և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

08.02.2018թ. մարզ է այցելել Չեխիայի «Էլեկտրոմոնտաժ Սիկորա» ընկերության տնօրենը և Չեխիայում հայազգի գործարար Ս.Աղասարյանը: Հանդիպմանը քննարկվել են Արմավիրի մարզում չեխ գործարարի կողմից նախատեսվող ներդրումային ծրագրերին վերաբերող մանրամասներ: Համապատասխան ծրագրերի իրագործման վերաբերյալ կողմերի միջև ստորագրվել է հուշագիր և պայմանավորվածություն է ձեռք բերվել նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

15.02.2018թ. ՀՀ Արմավիրի մարզպետարանում հրավիրված խորհրդակցությանը քննարկվել են «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ գյուղատնտեսության ոլորտում հնարավոր ծրագրեր իրականացնելուն վերաբերող հարցեր: «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ներկայացվել է նախորդ տարի Նոր Կեսարիա համայնքում 20 գյուղացիական տնտեսության կողմից 20հա հողատարածքի վրա իրականացրած եգիպտացորենի մշակման ծրագիրը, որը բավականին հաջող ընթացք և ավարտ է ունեցել:

19-22.02.2018թ. Արմավիրի մարզի պատվիրակությունը աշխատանքային այցով գտնվել է Իտալիայի Հանրապետության Վենետո նահանգում: 2018թ փետրվարի 19-ին ստորագրվել է

բարեկամության և համագործակցության վերաբերյալ համաձայնագիր, որը նախատեսում է փոխադարձ շահավետ համագործակցություն ծավալել մշակույթի, տնտեսության, կրթության, սոցիալական, սպորտի և տուրիզմի ոլորտներում, ինչպես նաև համագործակցության եզրեր գտնել երկու տարածքային միավորների հանրային հաստատությունների, ոչ կառավարչական կազմակերպությունների և ձեռնարկատիրական կազմակերպությունների միջև, կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել փաստաթղթի դրույթների իրականացման նպատակով ստեղծել երկկողմ աշխատանքային խմբեր:

2018թ. փետրվարի 20-ին մարզի պատվիրակությունը հանդիպել է Վենետոյի նահանգի պաշտոնատար անձանց, գործարարների հետ: Կողմերի միջև քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնց արդյունքում ձեռք են բերվել որոշ ուղղություններով համագործակցություն սկսելու վերաբերյալ պայմանավորվածություններ, պատվիրակությունն այցելել է նաև Մխիթարյան միաբանություն, ծանոթացել պատմությանը, թանգարանում և գրադարանում պահվող հազարավոր ցուցանմուշներին:

2018թ. փետրվարի 21-ին պատվիրակությունն այցելել է Վենետո նահանգի քարի վերամշակման ձեռնարկություն, ծանոթացել ժամանակակից սարքավորումներով հագեցած գործարանի տեխնիկական հնարավորություններին, արտադրվող տեսականուն: Պատվիրակության գործարար անդամները ձեռնարկության պատասխանատուների հետ փոխանակվել են տվյալներով և պայմանավորվածություն է ձեռք բերել հետագա համագործակցության ուղղությամբ: Պատվիրակությունը եղել է նաև հայ գործարարի կողմից ստեղծված և ղեկավարվող կահույքի արտադրությամբ զբաղվող գործարանում, որտեղ քննարկվել են նրանց կողմից Արմավիրի մարզում տնտեսական գործունեություն իրականացնելու հնարավորությունները:

12.03.2018թ. մարզ է այցելել Չեխիայի «Էլեկտրոմոնտաժ Սիկորա» ընկերության տնօրեն Պետրեմ Սիկորայի գլխավորած աշխատանքային խումբը: Արմավիրի մարզպետարանում հրավիրված խորհրդակցությանը չեխական «Էլեկտրոմոնտաժ Սիկորա» ընկերությունը ներկայացրել է Արմավիր քաղաքում կառուցվող աղբի վերամշակման գործարանի ծրագիրը: Նախատեսվում էր Չեխիայից ժամանած մասնագիտական խմբի կողմից Արմավիրի աղբավայրում ուսումնասիրությունների իրականացում և գործարանի կառուցման ծրագրի վերջնական հայեցակարգի և ժամանակահատվածի ներկայացում:

27.03.2018թ. մարզ է այցելել Ուկրաինայի Բելգորոդ-Դնեստրովսկի քաղաքի պատվիրակությունը՝ քաղաքապետ Ալլա Գինակի գլխավորությամբ: Պատվիրակությանն ուղեկցել է Էջմիածնի քաղաքապետը: Կարևորվել է Էջմիածին և Բելգորոդ-Դնեստրովսկի քաղաքների միջև սկսված համագործակցությունը, որն ամրագրվելու է կողմերի միջև ստորագրվող հուշագրով: Ներկայացվել են մարզի պատմությունը, հիմնական առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները, միաժամանակ պատրաստակամություն է հայտնվել աջակցություն ցուցաբերել Բելգորոդ-Դնեստրովսկիում կրթական ծրագրերի իրականացմանը:

17.04.2018թ. մարզ է այցելել ՌԴ Մոսկվայի մարզային դումայի նախագահի առաջին տեղակալի գլխավորած պատվիրակությունը: Անդրադառնալով արտաքին կապերի ոլորտում հաստատված փոխհարաբերություններին՝ ներկայացվել են Արմավիրի մարզպետարանի և ՌԴ Յարոսլավի, Վոլոգդայի մարզերի կառավարության միջև ստորագրված համագործակցության համաձայնագրի շրջանակներում իրականացված ձեռնարկները՝ ի նպաստ երկու ժողովուրդների դարերից եկող բարեկամության ամրապնդման և զարգացման: Այցի շրջանակում պատվիրակությունը եղել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, այցելել է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան:

21.04.2018թ. տեղի է ունեցել մարզի Վաղարշապատի տարածաշրջանի Բաղրամյանի միջնակարգ դպրոցի հիմնանորոգված մարզադահլիճի բացման արարողությունը, որն իրականացվել է Թուրքիայում բնակվող գործարար, ազգությամբ հայ Էֆրին Պաղի հովանավորությամբ:

05.05.2018թ. Արմավիրի թիվ 1 մշակույթի տանը հանդես է եկել չեխական «Բավականին մեծ թատրոն»-ը՝ «Սերը և ժամանակը» ներկայացմամբ: «Բավականին մեծ թատրոն» խմբի հյուրախաղերը կազմակերպվել է Հայաստանում Չեխիայի Հանրապետության դեսպանատան կողմից՝ մեր երկրում Եվրոպայի օրվան նվիրված տոնակատարությունների շրջանակում: Հյուրախաղերին աջակցություն են ցուցաբերել ՀՀ մշակույթի նախարարությունը և մարզային իշխանությունները:

18.06.2018թ. մարզ է այցելել «Art» բարեգործական ընկերության տնօրենը: Ութ տարի է «Art» բարեգործական ընկերությունը «Հատուցում» ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերում մի շարք մարզերում, այդ թվում՝ Արմավիրի մարզում արցախյան պատերազմի ժամանակ զոհված ազատամարտիկների, զինծառայողների ընտանիքների անդամներին, ինչպես նաև վիրավոր ազատամարտիկներին: Ընկերության կողմից իրականացվող ծրագրերից մեկն էլ հանդիսանում է ազատամարտիների ամառային հանգիստի կազմակերպումը Սև ծովի ափին:

29.06.2018թ. մարզ է այցելել «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի ռեկտոր պրոֆեսոր Ժան-Մարկ Լավեստին և համալսարանի պրոռեկտորը: Հանդիպման ընթացքում համագործակցության հուշագիր է ստորագրվել: Հուշագրի շրջանակում նախատեսվում է նաև հանդիպում աշակերտների ծնողների հետ, մասնակցություն համալսարանի «Բաց դռների օր» միջոցառմանը, մասնագիտություն ընտրելու հարցում աշակերտների համար միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև ֆրանսերենի իմացության վկայական ունեցողների հեշտացված կարգով ընդունելություն, անվճար կամ զեղչված տեղեր, զինվորական տարկետման իրավունք:

23.07.2018թ. մարզ է այցելել Ուրբան կայուն զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը և հիմնադրամի «Քաղաքականություն, մասնակցություն, մշտադիտարկում» թիմի ղեկավարը: Ներկայացվել է հիմնադրամի կողմից իրականացվող «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագիրը, որի նպատակն է խթանել Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների պատասխանատու կառավարումն ու օգտագործումը՝ հանրային մասնակցության և իրազեկման միջոցով: Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը տեղեկացրել է, որ նշված ծրագրի շահառու են հանդիսանում մարզի Ակնալիճ, Առատաշեն, Գայ, Գրիբոյեդով, Երասխահուն և Եղեգնուտ համայնքները, որտեղ աշխատանքներ են տարվում ծրագրի՝ «Հանրային իրազեկում, կրթություն, վարքագծի փոփոխություն» բաղադրիչի շրջանակներում: «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից Առատաշեն և Եղեգնուտ համայնքներում մասնակցային հիմունքներով իրականացվում է նաև ջրային ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված փորձնական ծրագիրը, որի նպատակն է բարելավել խմելաջրի համակարգը և ծառայությունների որակը, աշխատանքները կշարունակվեն 2019թ. ընթացքում:

27.07.2018թ. մարզ է այցելել Հայ Կրթական Հիմնարկություն ամերիկյան կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տնօրենը և Հայստանում դպրոցաշինության աշխատանքների պատասխանատուն: ՀԿՀ-ի Հայաստանում դպրոցաշինության աշխատանքների պատասխանատուն ներկայացրել է կազմակերպության դպրոցաշինության ծրագրի շրջանակում Արևադաշտ համայնքի նոր դպրոցի կառուցման գործընթացը, որը սկսվել է 2015 թվականի մարտ ամսին: 70 աշակերտի համար նախատեսված կրթօջախը կառուցվել է արդիական չափանիշներին համապատասխան և ընթացիկ տարվա սեպտեմբերին հանձնվել շահագործման: ՀԿՀ-ն իրականացնելու է նաև նորակառույց դպրոցի կահավորումը, համալրումն անհրաժեշտ գույքով և խաղահրապարակի կառուցումը:

Հաստատված կապերի զարգացման խթանման նպատակով 2018թ. օգոստոս ամսին ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան գրություններ են ուղարկվել Իտալիայի Հանրապետության Վենետոյի, Ռումինիայի Կլուժի նահանգային խորհրդի, Չեխիայի Մորավիա-Սիլեզիայի մարզի, Սլովակիայի Տրնավայի ինքնավար մարզի, Իրանի Արևմտյան Ատրպատականի նահանգի, ՌԴ Տվերի նահանգի, ՌԴ Յարոսլավի մարզի, ՌԴ Վոլոգդայի մարզի տարածքային միավորների ղեկավարներին:

18.09.2018թ. մարզի պատվիրակությունը և ՀՀ-ում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսն այցելել են Ծիածանի և Ամբերդի միջնակարգ դպրոցներ: 2018թ. օգոստոս ամսին «Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակում Ծիածան և Ամբերդ կրթական հաստատություններին ԱՄՆ դեսպանատան կողմից նվիրաբերվել է դպրոցական, խոհանոցային, սպորտային գույք և էլեկտրատեխնիկա:

19.09.2018թ. տեղի է ունեցել Բամբակաշատ համայնք մանկապարտեզի բարեկարգված բակի և խաղահրապարակի բացման արարողությունը: Մանկապարտեզի բակի բարեկարգման ծրագիրն իրականացվել է FCN (Focus on Children Now) կազմակերպության, «ԷՅ-ԹԻ-ՓԻ» (ARMENIA TREE PROJECT) բարեգործական հիմնադրամի անմիջական աջակցությամբ՝ 2 մլն դրամի շրջանակում: Կազմակերպությունների կողմից համանման ծրագրեր են իրականացվել նաև մարզի Տանձուտ և Գեղակերտ համայնքներում:

19.09.2018թ. մարզի Սարդարապատի միջնակարգ դպրոց են այցելել Գերմանիայի Դաշնության Սաքսոնիա-Անհալթ երկրամասի Հալլե (Զալլե) քաղաքի «Յոհան Քրիստիան Ռայլի» անվան դպրոցի 9 աշակերտներն ու 3 ուսուցիչները: «Աշակերտների փոխանակում» ծրագիրն իրականացվում է 10 տարի շարունակ՝ յուրաքանչյուր տարի 2 դպրոցների սովորողներ հնարավորություն են ստանում լինել քույր դպրոցում, 10 օր շրջել ու ծանոթանալ հյուրընկալ երկրի տեսարժան վայրերին, միասին սովորել ու տարաբնույթ ծրագրեր իրականացնել: 10 տարիների ընթացքում Սարդարապատի միջնակարգ դպրոցի շուրջ 50 աշակերտ 10 օրով եղել է Հալլեում, 8 աշակերտ ստացել է Գերմանիայի կրթության նախարարության կրթաթոշակ և 2 ամիս սովորել Հալլեի դպրոցում, իսկ շրջանավարտներից 4-ն արդեն սովորում են Գերմանիայի տարբեր բուհերում:

23.09.2018թ. մարզի պատվիրակությունը Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ժոնաթան Լաքոտի հետ այցելել է Մուսա լեռան հերոսամարտի հուշահամալիր և Հայաստանում, աշխարհի տարբեր վայրերում ապրող մուսալեռցիների, մարզի բնակիչների և բազմաթիվ հյուրերի հետ մասնակցել Մուսա լեռան հերոսամարտի 103-ամյակին նվիրված տոնակատարությանը:

09.10.2018թ. մարզի պատվիրակությունն այցելել է «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ: Հանդիպում է տեղի ունեցել «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հիմնադիրներ Զոհրաբ և Սեթա Ղազարյանների հետ, ներկայացվել են «Մայրատուն», «Պնակ մը կերակուր», «Աստվածաշնչի սերտողություն», «Հովանավորի ընտանիք», «Հույսի ճրագ» և այլ ծրագրերի միջոցով հիմնադրամի կողմից իրականացվող ձեռնարկները և դրանց նշանակությունը շահառուների շրջանում, քննարկվել են հիմնադրամի առաջիկա ծրագրերին վերաբերող մի շարք հարցեր:

05.11.2018թ. մարզ են այցելել Արգենտինայի ազգային գյուղատնտեսական տեխնոլոգիաների ինստիտուտի (INTA) ներկայացուցիչները, ովքեր Արգենտինայի դեսպանության և Արգենտինայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ միասին գյուղատնտեսության զարգացման ծրագրեր են ցանկանում իրականացնել Արմավիրի մարզի համայնքներում:

14.11.2018թ. ATP բարեգործական հիմնադրամի կողմից Արմավիրի թիվ 10 հիմնական դպրոցի բակում կազմակերպվել է ծառատունկ, որի ընթացքում տնկվել է 80 բարդի:

01.06.2018թ.-31.12.2018թ. Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող՝ «Համայնքներին մաքուր խմելու ջրի

ջրամատակարարում» ծրագրի շրջանակներում Նոր Արմավիր համայնքում խմելու ջրի ցանցի վերակառուցում ծրագրի շրջանակներում հին խողովակները փոխարինվել են նորերով:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել Էջմիածնի քաղաքապետի Լեհաստանի Հանրապետության Լոձի վոյեվոդության Լոձի քաղաքապետին ուղղված նամակ-հրավերը՝ 2019թ. գարնանը Էջմիածին այցելելու, ինչպես նաև Էստոնիայի Տարտու քաղաքի հետ տարբեր ոլորտներում համագործակցություն սկսելու համաձայնությունը:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բնագավառ

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել է պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը: Իրականացրել է ՀՀ Արմավիրի մարզպետի, մարզպետարանի գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկումը՝ մամուլի հաղորդագրություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, ծրագրեր, հայտարարություններ և այլ տեղեկատվական բնույթի նյութեր պատրաստելու և տարածելու, ինչպես նաև հարցազրույցներ կազմակերպելու և դրանց հրապարակայնությունն ապահովելու միջոցով:

2018թ. ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքում հրապարակվել է 255 մամլո հաղորդագրություն, 428 քաղաքացիական և համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների և այլ բնույթի հայտարարություններ և դրանց արդյունքների վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև տարբեր ոլորտներ ներկայացնող 128 տեղեկանք: Կազմակերպվել և իրականացվել է ավելի քան 80 հարցազրույց:

Ապահովվել է մարզպետի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակումը, մարզպետի այցերի, հանդիպումների, ընդունելությունների և մարզպետարանում անցկացվող նիստերի, խորհրդակցությունների, քննարկումների, բանակցությունների, պաշտոնական և աշխատանքային այլ միջոցառումների լուսաբանման կազմակերպումը, ինչպես լրատվության միջոցների ու այլ կազմակերպությունների միջև համագործակցությունը: Լրատվական գործունեություն իրականացնող 3 հեռուստաընկերությունների՝ «ԱԼՏ», «Լույս», «Նոյ Հայաստան», «Հայրենականչ» թերթի, իսկ հանրապետական ՋԼՄ-ներից՝ «Հանրային հեռուստաընկերություն» և «Արմենիա» հեռուստաընկերությունների, «Հանրային ռադիոյի» մարզային մշտական թղթակիցների և լրատվական այլ գործակալությունների, այդ թվում՝ մշտական մոնիտորինգ իրականացնող էլեկտրոնային լրատվական ավելի քան 20 կայքերի կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի և մարզպետարանի գործունեությանը վերաբերող լուսաբանումների թիվը գերազանցել է 600-ը:

2018թ. ՀՀ Արմավիրի մարզպետարանը հանդես է եկել 2 պարզաբանմամբ, պատասխանել է 12 գրավոր հարցման և ֆեյսբուքյան 292 օգտատերից ստացած 602 նամակի:

Ապահովվել է նաև (այս դեպքում միայն ՀՀ Արմավիր մարզպետարանի կայքում) համայնքապետերի և ավագանու որոշումների, համայնքային բյուջետային եկամուտների ու ծախսերի, համայնքապետերի կիսամյակային հաշվետվությունների և համայնքներում իրականացված վարչական հսկողության ակտերի ու դրանցում արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ տեղեկանքների, ինչպես նաև համայնքներին վերաբերող այլ նյութերի հրապարակումը: 2018թ. ընթացքում ՀՀ Արմավիր մարզպետարանի կայքում հրապարակվել է մարզի 97 համայնքի ավագանու 1026, իսկ համայնքի ղեկավարի՝ 648 որոշում, համայնքային բյուջետային եկամուտների ամսական, ծախսերի՝ եռամսյակային տվյալները, համայնքների 2018թ. բյուջեները, զարգացման ծրագրերը և տարեկան աշխատանքային պլանները, իրականացված վարչական հսկողության ակտերը և այլ բնույթի ընդհանուր 345 փաստաթուղթ:

Մարզպետարանն աջակցել է համայնքապետարանում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) շահագործման և «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջև փոխգործակցության ապահովման, ինչպես նաև համայնքապետարանում պաշտոնական կայքերի ներդրման և վարման աշխատանքներին:

2018 թվականին իրականացվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և մարզպետարանի աշխատանքային ծրագրով նախատեսված ՀՀ Արմավիրի մարզպետարանին վերապահված գործառույթները: